«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան - 2025

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացված դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 6
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 14
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 14
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 14
ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 17
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 17
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 20
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 23
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 30
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 35
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 39
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 42
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 46
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 49
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 52
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 58
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ ... 58
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 60
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 62
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 66
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 67
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 68

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ[1]

Այս բաժնի նպատակն է ծանոթացնել ընթերցողին ՄՈՒՀ-ի գործունեության համատեքստին՝ տրամադրելով տեղեկատվություն գործունեության միջավայրի, կրթական ծրագրերի և գնահատման գործընթացը պայմանավորող այլ առանցքային ուղղությունների մասին: Չափանիշներում ներկայացվող փաստերն ու դատողությունները կառուցվել են՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գործունեության արտաքին համատեքստը և ներքին միջավայրը:

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը

Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի պատմությունը սկիզբ է առել 1921 թվականին, երբ Ռոմանոս Մելիքյանի գլխավորությամբ ստեղծվել է երաժշտական ստուդիան՝ երաժիշտ մասնագետների պատրաստման նպատակով: 1923 թվականին այն վերանվանվել է «Կոնսերվատորիա», որը բաղկացած էր երեք փոխլրացնող օղակներից՝ երաժշտական դպրոց, քոլեջ (տեխնիկում) և բարձրագույն կրթության օղակ: 1939 թվականին ուսումնարանն առանձնացել է կոնսերվատորիայից, իսկ 1954-ին անվանակոչվել Ռ. Մելիքյանի անունով: 1997 թվականին ուսումնարանը վերակազմավորվել և դարձել է քոլեջ:

Քոլեջը գտնվում է ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլում:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջը իրականացնում է միջին մասնագիտական 4 կրթական ծրագիր՝ «Երաժշտության տեսություն», «Երաժշտական գործիքների կատարողական արվեստ» (լարային, փողային և ժողգործիքներ բաժիններով), «Երգչախմբավարություն» և «Երգեցողություն» (ակադեմիական, ժողովրդական, ջազ-էստրադային բաժիններով) ՀՀ ՈԱԾ-ի 5-րդ մակարդակին համապատասխան:

Ներկայումս քոլեջում սովորում է 409 ուսանող:

2024-2025 ուստարում քոլեջում դասավանդում են 150 դասախոս, որոնցից 144-ը ունեն բարձրագույն, իսկ 6-ը՝ միջին մասնագիտական կրթություն, ընդ որում՝ 45-ը աշխատում են համատեղությամբ: Քոլեջն ունի 4 պրոֆեսոր, 7 գիտությունների թեկնածու դասախոս: Քոլեջում դասավանդում է 4 գործատու:

Քոլեջի շրջանավարտներից 50-ը աշխատում են քոլեջում՝ որպես դասախոս, իսկ 13-ը՝ նվագակցող:

Շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2019-2020 ուս. տարվա 73 շրջանավարտներից 25-ը, 2020-2021 ուս. տարվա 83 շրջանավարտներից 31-ը, 2021-2022 ուս. տարվա 110 շրջանավարտներից 28-ը, 2022-2023 ուստարվա 97 շրջանավարտներից 31-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, որոշ դեպքերում՝ այլ մասնագիտությամբ: 2020-2023

[1] Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի ինքնավերլուծություն, 2024 թ.

թթ. իրենց մասնագիտությամբ աշխատում են՝ 44, ոչ մասնագիտությամբ՝ 115 շրջանավարտ։ Զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն դիրքերում են գտնվում «Ժողովրդական գործիքներ», «Երգեցողություն» ՄԿԾ-ները։

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

«Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել երաժշտական կրթության ոլորտում Քոլեջի դերն ու նշանակությունը, տարիների ընթացքում ձևավորված մասնագիտական ավանդույթները, ներգրավվածությունը միջին մասնագիտական երաժշտական կրթության ոլորտում: Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը նաև հաշվի է առել, որ Քոլեջն ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնում է առաջին անգամ, ինչպես նաև գտնվում է որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում:

Փորձագիտական խումբը հաշվի է առել, որ Քոլեջն ունի հստակ սահմանած առաքելություն. «Հայ և համաշխարհային մշակութային արժեքներ կրող, ստեղծագործական աշխատանքի ունակ և երաժշտարվեստ ժառանգականությունն ապահովող միջին մասնագիտական կրթության ոլորտի մրցունակ մասնագետների պատրաստում»: Թեև հաստատության Ռազմավարական ծրագիրը, իրականացման պլան-ժամանակացույցը վիճելի են և բազմաթիվ հարցեր են առաջացնում, քանի որ շահակիցները մասնակից չեն եղել դրանց ձևավորմանը, այդուհանդերձ, առաքելությունն ընդունելի է թե՛ ներքին և թե՛ արտաքին շահակիցների համար: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նշում է, որ հաստատության վարած քաղաքականությունն ու իրականացվող գործունեությունը համապատասխանում են Քոլեջի որդեգրած առաքելությանը:

Քոլեջի կառավարման և որակի ապահովման համակարգերի վերլուծությունը ցույց են տալիս, որ Քոլեջը չի իրականացրել իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն, որոշումների հիմքում չկան հավաստի տվյալներ: Մինչդեռ տվյալների վրա հիմնված վերլուծական մեխանիզմների ներդրումը և ռազմավարական պլանավորումն ու որակի ապահովման գործընթացի փոխկապակցումը կնպաստեն Քոլեջի կայուն զարգացմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Որակի ապահովման համակարգը Քոլեջում դեռևս ներդրման փուլում է, իսկ որակի մշակույթի կարևորումը՝ դեռ լիարժեք չգիտակցված: Քոլեջը դեռևս չի կարողանում հավաքագրել և վերլուծել անհրաժեշտ և հավաստի տվյալներ, ինչն անդրադառնում է հաստատության կառավարման արդյունավետության վրա: Քոլեջն անհրաժեշտություն ունի նաև համակարգել պլանավորման և հաշվետվողականության գործընթացները:

Փորձագիտական խումբը շեշտադրում է այն հանգամանքը, որ որոշումների կայացման գործընթացում շահակիցները չունեն ակտիվ ներգրավվածություն, առկա չեն գործընթացների արդյունավետության գնահատման և բարելավման մեխանիզմներ, հստակեցված չեն ստորաբաժանումների միջև հորիզոնական կապերը, պատասխանատվության շրջանակը, ինչն անդրադառնում է կառավարման արդյունավետության ապահովման վրա: Տվյալահենք որոշումների կայացումը, ինչպես նաև շահակիցների կարիքների վերհանումը թույլ կտա հիմնավորված որոշումներ կայացնել կրթական ծրագրերի և կառավարման գործընթացների վերաբերյալ: Քոլեջում որակի ապահովման համակարգի կայացումը կարևոր է տվյալների վրա հիմնված կառավարման մշակույթի զարգացման համար: Այն կնպաստի ուսումնական հաստատության կայուն զարգացմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ՀՀ ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան՝ Քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրեր երաժշտական կրթության ոլորտում: Կրթական ծրագրերը՝ «Երգչախմբավարություն», «Երաժշտության տեսություն», «Երաժշտական գործիքների կատարողական արվեստ», «Երգեցողություն», ամբողջապես համահունչ են առաքելությանը: Քոլեջի մասնագիտական կրթական ծրագրերը կազմված են պետական կրթական չափորոշիչների հիման վրա: Քոլեջի դասախոսական կազմն ազատ է ուսումնառության և դասավանդման ավանդական և նորարարական մեթոդների կիրառման հարցում: Ուսանողներին տրվող առաջադրանքները նպաստում են կատարողական վարպետության մշակմանը և կատարելագործմանը, իսկ գնահատումներն իրականացվում են լսումների, փակ դիտումների, համերգների ձևաչափով, ինչն ուսանողին հնարավորություն է տալիս ոչ միայն ներկայացնել սերտած երաժշտական նյութը, այլև մասնագիտական առումով հմտանալ՝ ներկայանալով հանդիսատեսի առջև բեմական միջավայրում:

Քոլեջում դասավանդում են բարձր մասնագիտական որակավորում և մանկավարժական փորձառություն ունեցող դասախոսներ, երիտասարդ դասավանդողներ: Դասախոսական կազմը համալրված է գործող երաժիշտ-կատարողներով, ովքեր հանդիսանում են նաև ոլորտի գործող մասնագետներ, գործատուներ: Քոլեջի դասախոսական կազմի գերակշռող մասը հիմնական աշխատողներ են, ինչը կարևոր է դասախոսական կազմի կայունության տեսակետից: Դրական է այն, որ Քոլեջի շրջանավարտները, բուհն ավարտելուց հետո, իրենց աշխատանքային գործունեությունը Քոլեջում են շարունակում: Փորձագիտական խմբի գնահատմամբ՝ Քոլեջին անհրաժեշտ է ներդնել դասախոսական կազմի կարիքների գնահատման և մասնագիտական, մանկավարժական, այլ անհրաժեշտ կարողությունների զարգացմանը նպաստող, ինչպես նաև դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմներ: Դասախոսների գնահատման արդյունքների հիման վրա մասնագիտական զարգացման միջոցառումների պլանավորումը կնպաստի դասախոսական կազմի կարողությունների զարգացմանը և դասավանդման արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ընդլայնելով համագործակցությունը պետական, համայնքային կառույցների և գործատու կազմակերպությունների հետ, իրականացնելով աշխատաշուկայի համակարգված մշտադիտարկումներ և վերլուծություն՝ հնարավոր կլինի որոշել, թե ինչպես արդիականացնել առկա ծրագրերը, ինչպիսի նոր

կրթական ծրագրեր են անհրաժեշտ, որոնք ուղղված կլինեն ոլորտի զարգացմանը: Կրթական ծրագրերի համեմատական վերլուծությունը համանման ծրագրերի հետ ևս կարևոր է՝ երաժշտական կրթության ոլորտի լավագույն փորձի փոխառման կամ տեղայնացման համար: Կրթական ծրագրերի գնահատման և արդյունավետության վերահսկման հստակ մեխանիզմների ստեղծումը կնպաստի կրթության որակի բարձրացմանը:

Փորձագիտական խումբը նշում է, որ ելնելով դիտարկված կրթական ծրագրերի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ ցուցաբերվում է մասնագիտական առանձնահատուկ մոտեցում՝ ելնելով անձի կարողություններից և ունակություններից: Հատկանշական է, որ մասնագիտական անհատական դասընթացների ընթացքում իրականացվում են նաև խորհրդատվություններ: Դասախոսական կազմը պատրաստակամ է ուսանողներին լրացուցիչ խորհրդատվություն տրամադրելու հարցում: Ակնհայտ է, որ ուսումնական գործընթացի կազմակերպման շղթայում ամենախոցելին պրակտիկաների կազմակերպման անարդյունավետությունն է: Փորձագիտական խումբը գտնում է, որ պրակտիկաների կազմակերպման հարցում հաստատությունն ունի խնդիրներ, որոնց շտկելու դեպքում ուսանողների համար կարելի է ստեղծել լիարժեք պայմաններ և հնարավորություններ՝ արդյունավետ օգտվելու նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսներից: Կիրառելով դասավանդման և ուսումնառության համապատասխան մեթոդները՝ Քոլեջում հնարավոր է դառնում պատրաստել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետ-շրջանավարտներ, որոնց մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները գործատուների համար հիմնականում ընդունելի են:

Քոլեջի կրթական ծրագրերի իրականացումը պահանջում է դրանց առանձնահատկություններին համապատասխանող միջավայր, այդ թվում՝ երաժշտական գործիքներով հագեցած լսարաններ, համերգասրահներ, տեխնիկական սարքավորումներ և այլն, որն ընդհանուր առմամբ Քոլեջում առկա է: Կրթական ծրագրերն իրականացնելու համար Քոլեջն ունի բավարար ենթակառուցվածքներ, համապատասխան նյութատեխնիկական բազա և ռեսուրսներ, որոնք ունեն բարելավման և զարգացման շարունակական անհրաժեշտություն: Քոլեջը սահմանափակ ֆինանսական ռեսուրսներով կարողանում է ապահովել կրթական ծրագրերի կատարումը, սակայն ռեսուրսների բարելավման համար միջոցներ չեն հատկացվում: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը շեշտադրում է ֆինանսական միջոցների բազմազանեցմանն ուղղված գործընթացների իրականացման անհրաժեշտությունը, ինչը կերաշխավորի կրթական ծրագրերի շարունակական իրականացումը:

Հաշվի առնելով, որ քոլեջն ունի կրթական ծրագրերի իրականացման համար համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, կրթական գործընթացները հիմնականում ապահովված են անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով, Քոլեջը կարողանում է պատրաստել աշխատաշուկայում պահանջարկված շրջանավարտներ՝ փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջին հաջողվում է ապահովել շնորհվող որակավորումների արժանահավատությունը:

Քոլեջում գործում են ուսանողների հավաքագրման որոշ մեխանիզմներ, որոնք բխում են ուսումնական հաստատության առանձնահատկություններից: Պոտենցիալ դիմորդների հետ կազմակերպվող միջոցառումները նպաստում են հավաքագրման աշխատանքներին:

Փորձագիտական խումբը հաշվի է առել, որ երաժշտական կրթության ոլորտում, մասնավորապես՝ կատարողական արվեստում, հետազոտությունն ունի որոշակի առանձնահատկություններ: Այս համատեքստում փորձագիտական խումբը նկատում է, որ Քոլեջում իրականացվող ուսումնական ստեղծագործական աշխատանքը պարունակում է հետազոտական բաղադրիչ. տեսական գիտելիքի յուրացման և որոշակի հետազոտության արդյունքում է ստեղծվում իրապես ինքնատիպ երաժշտական կատարումը՝ ուսանողի ստեղծագործական աշխատանքը: Կարևորելով այս առանձնահատկությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ նշված մոտեցումը պետք է հստակեցվի, ինտեգրվի և ամրագրվի կրթական ծրագրերում: Նշված տրամաբանությամբ Քոլեջը նպաստում է ուսումնողների ստեղծագործական-հետազոտական մտածողության զարգացմանը, կարևորում է դասախոսների մասնակցությունը ուսումնամեթոդական, հետազոտական աշխատանքներին: Միևնույն ժամանակ, առկա չեն դասախոսների և ուսանողների հետազոտական գործունեությանը նպաստող մեխանիզմներ և խրախուսման միջոցներ:

Փորձագիտական խումբը կարևորում է Քոլեջի համերգասրահների առկայությունը, սակայն գտնում է, որ հնարավոր է բարձրացնել տվյալ ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, ինչը կնպաստի ուսումնական գործընթացի կազմակերպման, ինչպես նաև հասարակությանը արժեքների ու գիտելիքների փոխանցման հնարավորությունների ընդլայնմանը:

Քոլեջի արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտում առկա են զարգացման հնարավորություններ: Քոլեջը կարևորում է միջազգային կապերի ստեղծումը և ընդլայնումը՝ ստեղծագործական-հետազոտական գործունեությունը բազմազանեցնելու համար, սակայն արտաքին կապերի կառավարման արդյունավետության բարձրացման և առկա կապերը ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու խնդիր ունի: Փորձագիտական խմբի կարծիքով՝ Քոլեջի միջազգային համագործակցությունը և արտաքին կապերը սահմանափակ են: Մինչդեռ Քոլեջն ունի հնարավորություն ընդլայնելու համագործակցությունն ինչպես հանրապետության, այնպես էլ արտասահմանյան կրթամշակութային հաստատությունների հետ, ինչը կնպաստեն Քոլեջի հեղինակության բարձրացմանը, ուսանողների և դասախոսների մասնագիտական աճին և միջազգային կրթական համայնքում ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:

Քոլեջը կարիք ունի վերանայելու և հստակեցնելու իրականացվող գործընթացների հաշվետվողականության և թափանցիկության ապահովման մեխանիզմները: Ներկայումս դրանք շահակիցներին չեն տալիս ամբողջական պատկերացում Քոլեջի գործունեության արդյունավետության մասին, չեն նպաստում հասարակության շրջանում ուսումնական հաստատության ճանաչմանը և վարկանիշի բարձրացմանը: Յուրաքանչյուր հաստատության պաշտոնական ներկայացվածությունը համացանցում կարևոր պայման է, ինչը հնարավորություն է ստեղծում ոչ միայն ներկայանալի դարձնել հաստատությունը և տեղեկատվություն տրամադրել շահակիցներին, հասանելի դառնալ միջազգային

գործընկերների համար, ստեղծել և պահպանել արտաքին կապեր, այլև ապահովել պատշաճ հաշվետվողականություն և թափանցիկություն: Փորձագիտական խումբը շեշտադրում է, մասնավորապես, Քոլեջի պաշտոնական կայքէջի ստեղծման անհրաժեշտությունը, ինչը հանրությանը լիարժեք ներկայանալու հնարավորություն կտա, կապահովի արտաքին և ներքին շահակիցների հետ հետադարձ կապը, կնպաստի հասարակության շրջանում ուսումնական հաստատության մասին իրազեկվածության և պետության ու հասարակության կողմից շրջանավարտների նկատմամբ վստահության բարձրացմանը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. քոլեջի նշանակալի դերակատարումն ու ներգրավվածությունը միջին մասնագիտական երաժշտական կրթության ոլորտում,
2. յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ մասնագիտական անհատական մոտեցումը՝ նպաստելու ուսանողի անընդհատ աճին,
3. դասախոսական կազմի համալրվածությունը գործող երաժիշտ-կատարողներով, այդ թվում՝ ՀՀ և միջազգային մրցույթների դափնեկիրներով,
4. գործընկեր կազմակերպությունների հետ ռեսուրսների համատեղ կիրառման արդյունավետ համագործակցությունը,
5. ուսանողների մասնակցությունը հանրապետական և միջազգային երաժշտական մրցույթներին և փառատոներին,
6. շրջանավարտների ներգրավվածությունը քոլեջում կազմակերպվող միջոցառումներին և դասավանդման գործընթացներում,
7. ստեղծագործական-հետազոտական մտածողության զարգացման նպատակով ուսանողներին տրվող առաջադրանքները,
8. ուսանողների մասնակցությամբ համերգային գործունեության իրականացումը, որը նպաստում է ուսանողների մասնագիտական զարգացմանը և հասարակական պատասխանատվությանը:

Հաստատության թույլ կողմերն են.

1. տվյալահենք վերլուծությունների և ռազմավարական որոշումների կայացման համար անհրաժեշտ գործոնների ուսումնասիրության պակասը, գնահատման ցուցիչների բացակայությունը,
2. որակի ապահովման պլանի բացակայությունը և տվյալների ու կարիքների վերհանման մեխանիզմների ոչ պարբերական ու համակարգված կիրառումը,
3. ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության ոչ բավարար մակարդակը կրթական ծրագրերի բարելավման, ռազմավարական պլանավորման և որակի ապահովման գործընթացներում,
4. դասախոսների մասնագիտական զարգացման և վերապատրաստման պլանավորված գործընթացների բացակայությունը,

5. հետադարձ կապի և շահակիցների կարծիքների հավաքագրման մեխանիզմների և դրանց արդյունքների ոչ բավարար կիրառումը բարելավման գործողություններում,
6. հաշվետվողականության ու թափանցիկության ապահովման սահմանափակ հնարավորությունները և պաշտոնական կայքի բացակայությունը,
7. ուսանողների պրակտիկաների կազմակերպման և գնահատման մեխանիզմների անհստակությունը,
8. ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների ներգրավման մեխանիզմների բացակայությունը ռեսուրսների արդիականացման և կրթական միջավայրի բարելավման նպատակով:

Խորհրդատվություններ

Տվյալահենք կառավարում

1. Վերանայել Քոլեջի ռազմավարական ծրագիրը՝ սահմանելով հստակ ռազմավարական նպատակներ, որոնք կարտացոլեն հաստատության առանձնահատկությունները, կնպաստեն կայուն զարգացմանը և կապակցված կլինեն պլան-ժամանակացույցի հետ՝ հստակեցնելով գործողությունների հաջորդականությունը, ժամկետները, պատասխանատուներին, ռեսուրսները, վերջնարդյունքները և գնահատման ցուցիչները:
2. Իրականացնել Քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների խորքային ուսումնասիրություն՝ ներառելով կրթական ծրագրերի արդյունավետության վերլուծությունը և տվյալահենք որոշումների կայացման հիմքերի ձևավորումը:
3. Ներդնել տվյալների հավաքագրման միասնական մոտեցումներ՝ ապահովելով ուսանողների, շրջանավարտների, գործատուների և շահակիցների հետադարձ կապի վերլուծությունը և դրա կիրառումը կրթական ծրագրերի բարելավման նպատակով:
4. Ձևավորել հաշվետվողականության պարբերական մեխանիզմ, որը կներառի ներքին և արտաքին շահակիցներին ներկայացվող վերլուծական հաշվետվություններ՝ հիմնված որակական և քանակական գնահատումների վրա, ինչը կապահովի կայունության և բարելավման արդյունավետությունը:
5. Հստակեցնել իրականացվող հարցումների մեթոդաբանությունը, վերանայել դրանց պարբերականությունը, ամփոփման և վերլուծության սկզբունքները՝ ապահովելով հավաստի տվյալների հավաքագրում և դրանց օգտագործում որակի բարելավման նպատակով:
6. Վերանայել և հստակեցնել որակի ապահովման պատասխանատուի գործառույթներն ու պատասխանատվության շրջանակը՝ սահմանելով որակի մշակույթի պլանավորված և պարբերական գործողություններ:
7. Ներգրավել արտաքին շահակիցներին (գործատուներ, շրջանավարտներ, ոլորտի մասնագետներ)՝ կրթական ծրագրերի բարելավման և ռազմավարական պլանավորման գործընթացներում:

8. Հստակեցնել ստորաբաժանումների և պատասխանատուների միջև հորիզոնական և ուղղահայաց կապերը, ինչպես նաև Քոլեջում գործող խորհուրդների առաքելությունն ու նպատակները, ինչը կնպաստի կառավարման և որոշումների կայացման արդյունավետությանը:

Որակավորումների արժանահավատ շնորհում

9. Վերանայել և արդյունավետորեն կիրառել կրթական ծրագրերի մշտադիտարկման մեխանիզմները՝ ապահովելով դրանց պարբերականությունը, տվյալահենք վերլուծությունները և արդյունքների վրա հիմնված բարելավումները:

10. Վերանայել մոդուլների և ՊԿՉ-երի քարտեզագրումները՝ ապահովելով ուսումնառության արդյունքների ձեռքբերման հստակ տրամաբանությունը, դասավանդման մեթոդների և գնահատման ձևերի համապատասխանությունը:

11. Մշակել ուսանողների կարողությունների գնահատման ամբողջական համակարգ՝ հաշվի առնելով մասնագիտությունների և կրթական մոդուլների առանձնահատկությունները՝ ապահովելով վերջնարդյունքների գնահատման չափելիություն և թափանցիկություն:

12. Իրականացնել հայաստանյան և արտասահմանյան միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համանման կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ)՝ ապահովելով կրթական ծրագրերի շարունակական բարելավումը, խթանելով դասախոսների և ուսանողների շարժունությունը:

13. Վերանայել պրակտիկաների կազմակերպման ընթացակարգերը՝ սահմանելով հստակ գնահատման պահանջներ և մեխանիզմներ, մասնավորապես՝ մանկավարժական պրակտիկաների համար, ապահովելով դրանց համակարգված իրականացումը, ուսանողների հաշվետվողականությունը և արդյունքների վերլուծությունը:

14. Բազմազանացնել ուսանողների պրակտիկայի հարթակները՝ ընդլայնելով գործատուների հետ համագործակցությունը և ապահովելով ուսանողների մասնագիտական հմտությունների զարգացումը իրական աշխատանքային միջավայրում:

15. Իրականացնել դասախոսների մասնագիտական պարբերական վերապատրաստումներ՝ ներդնելով մասնագիտական առաջընթացի պլանավորման և ապահովման մեխանիզմներ, օգտագործելով համագործակցող գործատուների հետ կապերը, այդ թվում՝ վարպետաց դասերի և փորձի փոխանակման ծրագրերի միջոցով:

16. Մշակել դասախոսական կազմի խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման մեխանիզմներ՝ հիմնված գնահատման հստակ չափանիշների վրա, ինչը կնպաստի դասախոսների մոտիվացմանը և մասնագիտական զարգացմանը:

17. Բազմազանացնել ֆինանսական աղբյուրները՝ ներգրավվելով նոր համագործակցային և դրամաշնորհային ծրագրերում՝ կրթական միջավայրի բարելավման և ռեսուրսների արդիականացման նպատակով:

Երկարաժամկետ զարգացում

18. Վերլուծել ուսանողների հավաքագրման առկա մեխանիզմների արդյունավետությունը՝ հիմնվելով նախորդ տարիների ընդունելության ցուցանիշների, դիմորդների նախասիրությունների և կրթական ծրագրերի գրավչության ուսումնասիրության վրա։

19. Ակտիվացնել ՈւԽ-ի գործունեությունը՝ ձևավորելով համագործակցության հարթակ երիտասարդական և մշակութային կազմակերպությունների հետ, ինչը կխթանի ուսանողների ներգրավվածությունը ստեղծագործական մասնագիտական միջավայրում։

20. Կազմակերպել օտար լեզուների լրացուցիչ դասընթացներ՝ ուսանողների և դասախոսների միջազգային կրթամշակութային ծրագրերում մասնակցությունն ապահովելու, շարժունությունը խթանելու և միջազգայնացման գործընթացն ամրապնդելու համար։

21. Սահմանել քոլեջում իրականացվող հետազոտական գործունեության ուղղությունները՝ շեշտադրելով երաժշտական արվեստի ոլորտին բնորոշ հետազոտությունների իրականացումը։

22. Ուսումնասիրել արտաքին շահակիցների կարիքները և մշակել հանրությանը մշակութային արժեքներ փոխանցելու ծրագրեր (համերգներ, կարճաժամկետ դասընթացներ, վերապատրաստումներ), ինչը կնպաստի քոլեջի վարկանիշի բարձրացմանը, շրջանավարտների պահանջարկի բարձրացմանը և հավելյալ ֆինանսական միջոցների ներգրավմանը։

23. Նախաձեռնել պաշտոնական կայքի ստեղծում, ակտիվացնել ներկայությունը սոցիալական հարթակներում՝ մշակելով հանրային կապերի գործուն ռազմավարություն, ինչը կապահովի հաստատության ճանաչելիության բարձրացումը, հաշվետվողականության, թափանցիկության և հետադարձ կապի մեխանիզմների ձևավորումը։



Արմեն Հարությունյան
Փորձագիտական խմբի ղեկավար

21-ը փետրվարի, 2025 թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

«Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[2] կողմից.

Արմեն Հարությունյան՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Զարգացման գծով պրոռեկտոր, փորձագիտական խմբի ղեկավար։

Գայանե Ավետիսյան՝ աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Շիրակի պետական համալսարանի Որակի ապահովման բաժնի պետ, փորձագիտական խմբի անդամ:

Մարիամ Հովհաննիսյան՝ Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջի «Երաժշտության» ամբիոնի վարիչ, փորձագիտական խմբի անդամ:

Վովա Արզումանյան՝ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող–փորձագետ։

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ «Քարտուղարության» բաժնի մասնագետ **Լիլիթ Ղազարյանը։**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

«Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ն ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 12.02.2024 թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո «Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը։

[2] Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը 2024 թ. փետրվար ամսին, 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրե հաստատության կողմից ընտրված աշխատակիցների հետ: Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ:

«Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ը ինստիտուցիոնալ կարողությունների վերանայված ինքնավերլուծությունը ներկայացվել է 01.06.2024թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի կողմից լրացված էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի[3], ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:

Նախնական այց

2024 թ. հոկտեմբերի 21-ին հանդիպում է տեղի ունեցել «Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ»-ի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

[3] Հավելված 3. Լրացուցիչ պահանջված փաստաթղթերի ցանկ

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել հոկտեմբերի 28-30-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք հաստատության կողմից տրամադրված ցանկից՝ պատահականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում[4] ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, ռեսուրսերի դիտարկում և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված և ՈԱԱԿ-ի կողմից ընտրված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը: Նախնական զեկույցը փորձագիտական խմբի հաստատումից հետո 2025 թվականի փետրվարի 17-ին տրամադրվել է Քոլեջին:

Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ Քոլեջն իր համաձայնությունը ներկայացրել է 2025 թվականի փետրվարի 20-ին:

Լիլիթ Ղազարյան
Փորձագիտական խմբի համակարգող

21-ը փետրվարի, 2025 թ.

[4] Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր:

«Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության 2019-2024թթ. ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ ՌԾ) հաստատվել է Քոլեջի կառավարման խորհրդի 2019թ. մայիսի 17-ի նիստում: Համաձայն 2019-2024թթ. ռազմավարական ծրագրի՝ Քոլեջի առաքելությունն է. «Հայ և համաշխարհային մշակութային արժեքներ կրող, ստեղծագործական աշխատանքի ունակ և երաժշտարվեստի ժառանգականությունն ապահովող միջին մասնագիտական կրթության ոլորտի մրցունակ մասնագետների պատրաստում»: Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է կազմակերպում ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան երաժշտական արվեստի ոլորտում չորս մասնագիտությամբ:

Քոլեջի 2019-2024թթ. ռազմավարական ծրագրով սահմանված են քոլեջի տեսլականը, նպատակները, հիմնախնդիրները, դրանց լուծման ուղիները: Քոլեջի հիմնական հինգ նպատակներն են.

- ուսանողների ընդունելության իրականացումը, ուսումնական գործընթացի ապահովումը, ընթացիկ և պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպումը,
- մեծահասակների կրթության և ուսուցման ծրագրերի իրականացումը,
- դասախոսների վերապատրաստումն ու որակավորման բարձրացման ապահովումը,
- աջակցումը ուսանողական խորհրդի աշխատանքներին, ինչպես նաև ուսանողների մասնակցությունը քոլեջի կառավարման և քոլեջի կողմից իրականացվող ծրագրերում,
- քոլեջի ուսանողների ինքնազարգացման, առողջության պահպանման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման և սննդի կազմակերպման համար միջոցների ձեռնարկումը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2024թ. ապրիլի 18-ին հաստատվել է Քոլեջի նոր՝ 2024-2029թթ. Ռազմավարական ծրագիրը, որի նպատակները հիմնականում նույնական են Հաստատության Կանոնադրական նպատակներին: Քոլեջի որակի պատասխանատուի կողմից 2024 թ. կազմվել է՝ 2015-2019 և 2019-2024թթ. ռազմավարական ծրագրերի մշտադիտարկման և գնահատման զեկույց, որը պատրաստվել է ռազմավարական ծրագրին հաջորդող ժամանակահատվածում:

Քոլեջի ինքնավերլուծությունում, ինչպես նաև պլան-ժամանակացույցում ներկայացված է այլ 6 նպատակ՝ արդյունավետ կառավարման համակարգի գործարկում, նյութատեխնիկական բազայի բարեկարգում, համալրում, ուսումնամեթոդական և մանկավարժական հմտությունների կատարելագործում, կրթական և այլ ծառայությունների ընդլայնում, սոցիալական գործընկերության շրջանակի ընդլայնում, զարգացում, հանրային իրազեկում և հետադարձ կապի ապահովում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաստատությունն իր զարգացման համատեքստում կարևորում է դիմորդների թվի ավելացումը, դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների զարգացումը և ենթակառուցվածքների բարելավումը: Հարկ է նշել, որ գործողությունների իրականացման համար սահմանված ժամկետը հիմնականում ՌԾ իրականացման ժամկետն է, չկան պատասխանատուներ, գնահատման ցուցիչներ, բացակայում է հստակեցված ֆինանսական հաշվարկ (նշվում է՝ ներքին ռեսուրսներ, արտաբյուջե, ինքնաֆինանսավորում, պետական բյուջե և այլն):

Ինքնավերլուծության համաձայն՝ Քոլեջի ներքին շահակիցներն են ուսանողները, դասախոսական և վարչական անձնակազմերը, արտաքին շահակիցները՝ գործատուները, շրջանավարտները: Փաստաթղթերի վերլուծության և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Ռազմավարական ծրագրի մշակման փուլում արտաքին և ներքին շահակիցներն ընդգրկված չեն եղել և Ռազմավարական ծրագրի մշակմանը չի նախորդել շահակիցների կարիքների վերհանումը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին շահակիցները համանման պատկերացումներ ունեն քոլեջի զարգացման ուղղությունների վերաբերյալ և կարևորում են երաժշտական արվեստի ոլորտում մրցունակ մասնագետների պատրաստման գործում քոլեջի դերը: Այս հանգամանքին առավելապես նպաստում է երաժշտական կրթության ոլորտում Ռ.Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման մեծ փորձն ու ավանդույթները, մասնագիտական համայնքում ձևավորված վարկանիշը, հաստատության ղեկավար և դասախոսական կազմերի մասնագիտական կրթության ոլորտի հեռանկարի պատկերացումն ու կարևորումը:

Քոլեջի Կառավարման խորհրդի 2024թ. ապրիլի 18-ի նիստի որոշմամբ, հաստատության ռազմավարական ծրագրի հետ մեկտեղ, հաստատվել է նաև կազմակերպության ռազմավարական ծրագրի մշակման, իրականացման, մշտադիտարկման, գնահատման և վերանայման քաղաքականությունը: Քաղաքականությամբ սահմանվել են գնահատման փուլերը, մշտադիտարկման գործընթացի ընթացակարգը: Հարկ է նշել, որ քոլեջի կողմից ՌԾ գնահատման որակական և քանակական ցուցիչներ չեն սահմանվել: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ տնօրենի տարեկան հաշվետվությունները չեն կապակցվում ռազմավարական առաջնահերթություններին և չեն արտացոլում ռազմավարական ծրագրերի իրականացման ընթացքը և առկա խնդիրները:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջն ունի հստակ ձևակերպված և շահակիցների համար ընդունելի առաքելություն, որը թույլ է տալիս

պահպանել ոլորտային ավանդույթները, ապահովել կրթական ծրագրերի կայունությունը: Սակայն առաքելության լիարժեք իրագործման համար անհրաժեշտ է սահմանել հստակ նպատակներ և ռազմավարական առաջնահերթություններ, ինչը թույլ կտա կրթական գործունեության ավելի նպատակային կազմակերպում, ռեսուրսների օպտիմալ բաշխում և ծրագրերի արդյունավետ վերահսկողություն:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջին անհրաժեշտ է մշակել ռազմավարական ծրագրին համահունչ գործողությունների պլան-ժամանակացույց, որը կարող է ապահովել գործողությունների շարունակականությունը և ռեսուրսների արդյունավետ բաշխումը ռազմավարական նպատակներին հասնելու համար:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջի ռազմավարական նպատակների իրագործման համար գնահատման մեխանիզմների ներդրումը ոչ միայն կապահովի առաջընթացի վերահսկումը, այլ նաև թույլ կտա հիմնավորված գնահատել ռազմավարական գործողությունների արդյունավետությունը: Հստակ չափանիշների և գնահատման մեխանիզմների բացակայությունը կարող է հանգեցնել ռազմավարական գործընթացների ոչ համակարգվածության և իրական ազդեցության անհստակությանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Քոլեջի շահակիցների համախմբվածությունը առաքելության շուրջ: Սակայն շահակիցների մասնակցության բացակայությունը ռազմավարական պլանավորման փուլում կարող է հանգեցնել ռազմավարական որոշումների և շահակիցների ակնկալիքների միջև անհամապատասխանության: Նրանց ներգրավման մեխանիզմների մշակումը թույլ կտա ռազմավարական ծրագրերը համահունչ դարձնել կրթական ոլորտի զարգացման պահանջներին և բարելավել դրանց արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Քոլեջում տարեկան հաշվետվությունների կազմման փաստը: Սակայն դրանց կապակցումը ռազմավարական ծրագրի առաջնահերթությունների հետ հնարավորություն կտա ոչ միայն վերահսկել նպատակների իրագործման մակարդակը, այլև ժամանակին հայտնաբերել բացթողումները և ճշգրտել ռազմավարական գործողությունները:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում 2024 թվականին հաստատված ռազմավարական ծրագրի մշտադիտարկման, գնահատման և վերանայման քաղաքականությունը: Սակայն դրա արդյունավետ կիրառումը պահանջում է գնահատման և մշտադիտարկման մեխանիզմների հստակեցում: Առանց հստակ գնահատման չափորոշիչների և տվյալների վերլուծության մեխանիզմների, ռազմավարական պլանավորումը կարող է չունենալ իրական ազդեցության կրթական ծրագրերի զարգացման և կառավարման գործընթացների կատարելագործման վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջն ունի հստակ սահմանված առաքելություն, որն արտացոլում է շահակիցների կարիքները, երաժշտական կրթության ոլորտում միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման մեծ փորձը և հեռանկարների պատկերացումն ու գիտակցումը, ներքին և արտաքին շահակիցները կարևորում են քոլեջի

որդեգրած առաքելության լիարժեք իրականացումը, հաստատությունը քայլեր է ձեռնարկում ՌԾ գնահատման մեխանիզմների ներդրման ուղղությամբ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի կառավարումն իրականացվում է քոլեջի կանոնադրությանը համապատասխան՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ՝ տնօրենի և Կառավարման խորհրդի կողմից: Կառավարման խորհուրդը բաղկացած է 11 անդամից, որի կազմը հաստատում է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը: Քոլեջում գործում են նաև Տնօրինական խորհուրդը, Մանկավարժական խորհուրդը, որոնք համաձայն համապատասխան կանոնակարգերի տնօրենին կից խորհրդակցական մարմիններ են, ինչպես նաև, Ուսումնամեթոդական խորհուրդը, որը ուսումնամեթոդական հարցերը քննող խորհրդակցական մարմին է:

2021 թվականին հաստատված քոլեջի կազմակերպական կառուցվածքում ներկայացված են հաստատության ուղղահայաց և հորիզոնական կապերը: Սակայն փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ստորաբաժանումների միջև (Օրինակ, բաժնի վարիչների և պրակտիկայի պատասխանատուի, որակի ապահովման պատասխանատուի և մյուս ստորաբաժանումների ղեկավարների) համագործակցության մեխանիզմները սահմանված չեն:

Քոլեջում գործող խորհուրդների, ստորաբաժանումների գործունեությունը և լիազորությունների շրջանակը սահմանվում են համապատասխան կանոնակարգերով: Առկա են պաշտոնների նկարագրերը: Դասախոսական, ուսանողական համակազմերը ներկայացված են Կառավարման, Տնօրինական խորհուրդներում, Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկված են ուսումնական հաստատության բոլոր դասախոսները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խորհուրդներում ներգրավված ուսանողներն ու դասախոսները նախաձեռնողականություն չեն ցուցաբերում կարիքների վերհանման համար: Գործնականում ներքին շահակիցները չեն ներգրավվում իրենց վերաբերող որոշումների կայացման գործընթացում, իսկ նիստերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման և շահակիցներին իրազեկելու մեխանիզմներ չեն կիրառվում: Մասնավորապես,

առկա չեն կառավարչական որոշումների կամ ներքին այլ տեղեկատվության տարածման մեխանիզմներ արտաքին շահակիցների շրջանում։

Ֆինանսների բաշխումը քոլեջն իրականացնում է տարեկան պլանավորմամբ՝ նախահաշվի հիման վրա: Ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատավարձերը (2021 թվականին՝89.30%, 2022-ին՝ 93.39%, 2023-ին՝ 94.84%), տնտեսական ծախսերը (2021-ին՝3.37%, 2022-ին՝ 2.95%, 2023-ին՝ 2.76%), ուսումնական սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսերը (2021-ին՝2.9%, 2022-ին՝ 0.28%, 2023-ին՝ 0.42%): Ֆինանսական պլանավորումը չի փոխկապակցվում ռազմավարական նպատակներին։

Որպես կարճաժամկետ պլանավորում Քոլեջը դիտարկում է կիսամյակային ընթացիկ պլանները, իսկ որպես միջնաժամկետ՝ տարեկան կտրվածքով իրականացվող աշխատանքների պլանները, ռազմավարական ծրագիրը դիտարկվում է որպես երկարաժամկետ պլանավորում: Դրանց ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք չեն փոխկապակցվում ռազմավարական ծրագրին, այլ ներկայացնում են յուրաքանյուր ստորաբաժանման գործառութային շրջանակը ներառող գործողությունների կատարումը։

Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաշվետվողականության համակարգը նույնպես չի արտահայտում ռազմավարական նպատակների իրականացումը: Քոլեջի տնօրենի 2021թ., 2022թ., 2023թ. տարեկան հաշվետվությունները նկարագրողական են, առանց վերլուծական մոտեցման, փոխկապակցված չեն ոչ ռազմավարական ծրագրի, ոչ պլան-ժամանակացույցով նախանշված նպատակներին: Հաշվետվությունները չեն արտացոլում նաև հաստատության ստորաբաժանումների գործունեության արդյունքները, չեն ներառում ֆինանսական ցուցանիշների մասին վերլուծություն։ Դրանք ևս ներկայացնում են յուրաքանչյուր տարի իրականացված միջոցառումները՝ չկապակցելով դրանք ռազմավարական նպատակներին, ինչպես նաև չուսումնասիրելով չկատարված գործընթացների պատճառները։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ իրականացվող հաշվետվությունները չեն ներդրվում հետագա բարելավումների հիմքում։

Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրություն չի կատարվել։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնասիրելով ընդունելության ցուցանիշները՝ քոլեջը պլանավորել է ուսանողների ընդունելության տեղերը հաջորդ ուստարվա համար։ Ուսումնասիրությունների արդյունքում քոլեջը շեշտադրում է միջազգային համագործակցությունների ընդլայնման հնարավորությունները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս ուղղությամբ տեսանելի քայլեր դեռևս չեն իրականացվել։ Քոլեջի որակի ապահովման պատասխանատուի կողմից ևս իրականացվում են հարցումներ։ Այսուհանդերձ կիրառվող մեխանիզմները դեռևս չեն ապահովում քոլեջի գործունեության բոլոր ոլորտներն ընդգրկող տվյալների վերհանում և պարբերական թարմացում կառավարչական որոշումների կայացման համար։

Քոլեջը փորձում է իրականացվող գործընթացներում ներդնել ՊԻԳԲ շրջափուլը: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գործընթացների կանոնակարգման նպատակով հաստատությունը մշակել է ընթացակարգեր, որոնք գտնվում են ներդրման փուլում։ Որակի ապահովման պատասխանատուի կողմից վերանայվել ու

փոփոխությունների են ենթարկվել կիրառվող հարցաշարերը: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գնահատման ու բարելավման մեխանիզմները և դրանց կիրառման պարբերականությունը քոլեջի կողմից չի հստակեցվել:

Քոլեջն ունի ֆեյսբուքյան էջ, որտեղ լուսաբանվում են քոլեջի առօրյա գործընթացները: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումներ չեն իրականացվում, ապահովված չէ կառավարման մարմինների որոշումների թափանցիկությունն արտաքին շահակիցների համար:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջի կառավարման գործընթացների իրականացման նպատակով գործում են խորհուրդներ, ինչպիսիք են Կառավարման խորհուրդը, Տնօրինական խորհուրդը և Մանկավարժական խորհուրդը: Այս կառույցները կարող են ապահովել բազմակողմանի քննարկումներ և մասնակցային կառավարում: Սակայն շահակիցները, մասնավորապես ուսանողները և դասախոսները, բավարար չափով չեն ներգրավվում այս մարմինների աշխատանքներում, ինչը սահմանափակում է որոշումների կայացման ներառականությունը: Քոլեջը կարող է խթանել շահակիցների ակտիվ ներգրավվածությունը՝ ձևավորելով հստակ մեխանիզմներ նրանց կարիքների հավաքագրման և քննարկումների ընթացքում արտացոլման համար:

Ստորաբաժանումների միջև համագործակցության մեխանիզմների սահմանումը կնպաստի ռազմավարական խնդիրների արդյունավետ իրագործմանը՝ հիմնվելով հաստատության մարդկային ներուժի վրա:

Ֆինանսական պլանավորումը ներկայումս իրականացվում է տարեկան կտրվածքով, սակայն այն չի փոխկապակցվում ռազմավարական նպատակների հետ: Քոլեջի ծախսերի գերակշիռ մասն ուղղվում է աշխատավարձերին, մինչդեռ ուսումնական սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսերը կազմում են ընդամենը 0.42%: Այս անհամաչափությունը սահմանափակում է ուսումնական գործընթացի արդիականացման հնարավորությունները: Ֆինանսական կառավարման բարելավման համար Քոլեջն անհրաժեշտություն ունի մշակելու զարգացմանն ուղղված ֆինանսավորման ռազմավարություն, որը ներառի ուսումնական միջավայրի բարելավման նպատակային ծախսեր և այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների ներգրավման մեխանիզմներ:

Հաշվետվողականության համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով փորձագիտական խումբը կարևորում է հստակ ու չափելի ԳԱՑ-երի սահմանումը և ըստ դրանց հաշվետվությունների կազմումը: Հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի արտացոլումը, գրանցած արդյունքների դինամիկայի վերլուծությունը կարևոր են ռազմավարական ծրագրի իրագործելիությունը գնահատելու, խնդիրները վերհանելու և հաստատության ռեսուրսների հիման վրա բերալավման պլաններ մշակելու համար:

Կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով փորձագիտական խումբը շեշտադրում է որակի ապահովման համակարգի կողմից քոլեջի գործունեության բոլոր ուղղություններն ընդգրկող տվյալների հավաքագրման

անհրաժեշտությունը: Տվյալների վրա հիմնված կառավարչական որոշումների կայացումը կնպաստի քոլեջի ռազմավարական երկարաժամկետ ու կայուն զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը փորձում է ներդնել կառավարման ՊԻԳԲ շրջափուլը, սակայն այն դեռևս համակարգված կերպով չի կիրառվում: Ուսանողների և շահակիցների շրջանում անցկացվող հարցումները պարբերական և խորքային չեն, իսկ դրանց արդյունքները չեն վերածվում կոնկրետ բարելավումների: ՊԻԳԲ-ի ամբողջական իրականացումը թույլ կտա Քոլեջին ոչ միայն պլանավորել գործողությունները, այլև պարբերաբար վերանայել դրանց արդյունավետությունը՝ հիմնվելով վերլուծական տվյալների վրա:

Փորձագիտական խումբը շեշտադրում է նաև քոլեջի տեղեկատվական հարթակների առավել արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը արտաքին շահակիցների շրջանում կրթական ծրագրերի ու հաստատության զարգացման ուղղությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ու թափանցիկության բարձրացման նպատակով:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ներքին և արտաքին շահակիցներն ամբողջությամբ ներգրավված չեն որոշումների կայացման գործընթացներում, քոլեջը չի իրականացնում իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն, որոշումների կայացման հիմքում առկա չեն հավաստի և վերլուծված տվյալներ, պլաններում արտացոլված չեն հաստատության գործունեության առաջնահերթությունները և դրանց իրագործման քայլերը չեն կապակցվում ռազմավարական նպատակներին, բարելավումները չեն հենվում որակի ապահովման համակարգի կողմից վերհանված խնդիրների վրա, վարչարարությունը դեռևս ամբողջովին չի իրականացվում որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը չի համապատասխանում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական 4 կրթական ծրագիր՝ «Երաժշտության տեսություն», «Երաժշտական գործիքների կատարողական արվեստ» (լարային, փողային և ժողգործիքներ բաժիններով), «Երգչախմբավարություն» և «Երգեցողություն» (ակադեմիական, ժողովրդական, ջազ-էստրադային բաժիններով): Քոլեջը նախատեսում է ներդնել հնչյունային օպերատորի և

ստեղնաշարային գործիքներ լարողի մասնագիտությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նոր մասնագիտության ներդրման համար հիմք են հանդիսացել մասնագիտական համայնքից ստացված արձագանքները: Աշխատաշուկայի համակարգային վերլուծություն քոլեջի կողմից չի իրականացվել:

Քոլեջը մեծ դերակատարություն ունի ավելի քիչ գրավչություն ապահովող կրթական ծրագրերի իրականացման և հազվադեպ հանդիպող մասնագետների պատրաստման, հատկապես՝ համապատասխան կարողություններ ունեցող ուդի, թառի, սանթուրի, կոնտարաբասի մասնագետներով աշխատաշուկան ապահովելու գործում:

2024-2029թթ. Ռազմավարական նոր ծրագրում Քոլեջի բարելավման առաջնային ուղղություններից մեկը նշվում է դուալ կրթության մոդելի փորձարկում և ներդրում: Այս ուղղությամբ աշխատանքներ հաստատությունը դեռևս չի իրականացրել:

Քոլեջի դասախոսական կազմը մասնակցել է պետական կրթական չափորոշիչների մշակմանը: Կրթական ծրագրերը մշակված են պետական կրթական չափորոշիչների հիման վրա: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Քոլեջի բոլոր կրթական ծրագրերը ներառում են ուսումնական պլաններ, մոդուլային և առարկայական ծրագրեր: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ տարբեր կրթական ծրագրերի ուսումնական պլաններում հանրակարթական առարկաների տեսական և գործնական ժամաքանակների բաշխման մեջ առկա են տարբերություններ, սակայն քոլեջը չի հստակեցրել՝ ինչով է պայմանավորված այս տարբերությունը: Այսպես օրինակ՝ «Գործիքային կատարողական արվեստ» մասնագիտության շրջանակում «Հայոց պատմություն» առարկայի համար նախատեսված է 48 ժամ տեսական և 24 գործնական բաղադրիչի համար, իսկ «Երաժշտության տեսություն» մասնագիտության համար 36-ական ժամ տեսական և գործնական բաղադրիչների համար: Ուսումնական պլաններում մասնագիտական դասընթացներում գործնական ժամաքանակները գերակշռում են՝ կազմելով մինչև 92%:

Բացի հիմնական հանրակրթական առարկաներից և մասնագիտական մոդուլային ծրագրերից, ուսումնական պլաններում առկա են նաև առարկաներ, որոնք ներդրվել են ընտրովի և պահուստային ժամերի հաշվին, օրինակ «Երգեցողություն» մասնագիտական ծրագրում ներդրվել է կոմպոզիցիա առարկան, ուսանողների ստեղծագործական և երաժշտական մտքի զարգացման համար, իսկ «Գործիքային կատարողական արվեստ» կրթական ծրագրի սոլֆեջիո և հարմոնիա առարկաները ավելի խորությամբ ուսումնասիրելու համար ուսումնական պլանում նախասիրական առարկաների մեջ լրացուցիչ ներդրել են սոլֆեջիո և հարմոնիա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կրթական ծրագրերում փոփոխությունները տեղի են ունենում ամբիոնների առաջարկով՝ ելնելով մասնագիտական որոշակի առանձնահատկություններից: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ «Երգեցողություն» մասնագիտությունում իտալերենի իմացության բավարար մակարդակ ապահովելու համար Քոլեջը հրավիրել է իտալացի դասախոսի, ով հասարակական հիմունքներով իտալերենի դասեր է անցկացնում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասավանդման մեթոդների ընտրությունը իրականացնում են դասախոսները՝ իրենց փորձից և ուսանողների

ունակություններից ելնելով, օրինակ տեսական առարկաներում կիրառվում են խաղային մեթոդ, քննարկում և այլ մեթոդներ։ Կիրառվող մեթոդները թույլ են տալիս զարգացնել ուսանողների մասնագիտական հմտությունները և հնարավորինս լավագույն ձևով հասնել սահմանված վերջնարդյունքների։

Քոլեջն իրականացրել է կրթական ծրագրերի ուսումնառության արդյունքների քարտեզագրում, որը սակայն չի արտացոլում ՄԿԾ-ում ներկայացված վերջնարդյունքների ձեռքբերումը, հստակ չէ նաև քարտեզագրման մեթոդիկան։ Բացի այդ, քարտեզագրումների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուսումնառության արդյունքների ձեռքբերման համար հաճախ սահմանվել են դասավանդման և ուսումնառության միևնույն մեթոդները։

Դասալսումների և փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ դասավանդման գործընթացներում դասախոսները կարևորում են ուսանողների ստեղծագործական և հետազոտական մտքի զարգացումը, մասնագիտական անհատական դասերին ընտրվում են յուրաքանչյուր ուսանողի կարողություններին և երաժշտական զգացողություններին համապատասխան ստեղծագործություններ։ Անհատական դասերի շնորհիվ, հետազոտական աշխատանքը յուրաքանչյուր ուսանողի հետ առանձնահատուկ և ըստ իր կատարած ստեղծագործության պահանջի և բնույթի է ստացվում։ Քոլեջում ուսանողները հնարավորություն ունեն ընտրել անհատական ուսուցման մասնագիտական դասախոսին։

Բացի այդ, մասնագիտական մտածողության զարգացումը խթանելու համար քոլեջի կողմից կազմակերպվում են հանդիպումներ և վարպետաց դասեր նշանավոր արվեստագետների, երաժիշտների ու կոմպոզիտորների հետ, ինչպիսիք են Սևիլիայի Մ. Կատիոյի բարձրագույն կոնսերվատորիայի պրոֆեսոր Ֆրանցիսկո Կանտոն, «Արաքս» խմբի հիմնադիր Տիգրան Տեր-Ստեփանյանը, կոմպոզիտորներ Էդգար Գյանջումյանը, Ռոբերտ Ամիրխանյանը։

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողների անհատական ծրագրերը կազմելիս քոլեջում առաջնորդվում են աստիճանական բարդացման սկզբունքով՝ ծրագրերն աստիճանաբար բարդացնելով, նաև հաշվի առնելով ուսանողների անհատական ունակությունները։

Հետազոտական կարողությունների զարգացման նպատակով դասախոսներն ուսանողներին տրվող հանձնարարականներում խթանում են նյութի տեսական ուսումնասիրությունը։ Ուսանողներին հնարավորություն է ընձեռվում այցելել մշակույթային միջոցառումների և համերգների՝ դիտարկելու և վերլուծելու կատարողական տեխնիկան։ Հետազոտական աշխատանքներ իրականցվում են նաև ռեֆերատների ձևով՝ տարբեր հեղինակների կյանքին, ստեղծագործություններին ծանոթանալու նպատակով։ Ակադեմիական ազնվության պահպանման և գրագողության բացառման մեխանիզմներ քոլեջի կողմից չեն մշակվել։

Քոլեջն ունի նաև ուսանողներին համախմբող երաժշտության լաբորատոր հարթակներ, որոնք հանդիսանում են 2019-2023 թվականներին ստեղծված համույթները, այդ թվում՝ ջութակահահարների անսամբլը, քանոնահարների անսամբլը, երգչախումբը, էստրադային-

սիմֆոնիկ նվագախումբը, ժողովրդական գործիքների նվագախումբը, փողային նվագախումբը։

Քոլեջը 2022թ. մշակել է «Ուսանողների գիտելիքների և կարողությունների ստուգման և գնահատման» քաղաքականություն և ընթացակարգ։ Գործում է ուսանողների գիտելիքների գնահատման 10 միավորային համակարգը, հիմնականում գնահատումն իրականացվում է հանձնաժողովի միջոցով։

Քոլեջն ունի 3 տեսակի մատյան՝ հանրակրթական առարկաների, մասնագիտական խմբերի և անհատական ուսանողի համար, որոնցում պարբերաբար գրանցվում են ուսանողների հաճախումներն ու ընթացիկ գնահատումները 1-ին կուրսից սկսված։

Բոլոր կրթական ծրագրերում ուսանողների գնահատումն իրականացվում է ուսումնառության ընթացքում (ընթացիկ), կիսամյակի և ուսումնական տարվա ավարտին (ամփոփիչ), ուսումնառության ավարտին (ամփոփիչ ավարտական ատեստավորում)։

Դասալսումներից և մասնագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսն անընդհատ աշխատում է ուսանողի հետ, հետադարձ կապ ապահովում, շտկում ընթացիկ սխալները, այսուհանդերձ գնահատվում է վերջնական արդյունքը՝ կատարումը։ Ուսանողը գնահատվում է վերջնարդյունքի պահանջի առնվազն նվազագույն շեմը հաղթահարելու դեպքում։

Ելնելով մասնագիտական առանձնահատկություններից՝ կատարողական կրթական ծրագրերում ամփոփիչ գնահատումներն իրականացվում են փակ համերգներով, լսումներով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մոդուլային ծրագրերում ներկայացված են մոդուլի գնահատման կարգը, կատարման չափանիշները։ Գնահատման թերթիկների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ միայն «Երաժշտության տեսություն» կրթական ծրագրում և որոշ մոդուլների, օրինակ սոլֆեջիոյի, երաժշտական գրականության յուրաքանչյուր արդյունքի գնահատման համար են առանձնացված բանավոր հարցեր և գործնական առաջադրանքներ, ինչպես նաև սահմանված են ռուբրիկներ առաջադրանքների գնահատման համար։ Յուրաքանչյուր կիսամյակի վերջում մասնագիտական մոդուլները ևս մեկ անգամ ամփոփվում են, առկա է կիսամյակային ամփոփիչ հարցաշար, բացառությամբ կատարողական երաժշտական մոդուլների, որոնք ամփոփվում են լսումներով։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ըստ «Պրակտիկայի կազմակերպման և անցկացման» կանոնակարգի՝ Քոլեջի կողմից սահմանված պրակտիկաների տեսակներն են կատարողական, մանկավարժական և նախաավարտական։ Սակայն ուսումնական պլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական, մասնագիտական/կատարողական, ընդհանուր և հատուկ մասնագիտական, մանկավարժական և նախաավարտական։ «Երգեցողություն» և «Երաժշտական գործիքների կատարողական արվեստ» կրթական ծրագրի ուսանողները իրենց ուսումնական պրակտիկան անցկացնում են առաջին և երկրորդ կիսամյակներում, մասնագիտական կատարողական պրակտիկան՝ երրորդ-չորրորդ կիսամյակներում, իսկ նախաավարտական պրակտիկան՝ ութերրորդ կիսամյակում։ «Երաժշտության տեսություն» կրթական ծրագրում ուսումնառության բոլոր կիսամյակներում ուսանողներն ունեն պրակտիկա՝ ընդհանուր և հատուկ

մասնագիտական, մանկավարժական, ինչպես նաև համերգավարություն՝ ընդհանուր 720 ժամ ծանրաբեռնվածությամբ: Մասնագիտական/կատարողական պրակտիկայի շրջանակում ուսանողները ներկա են գտնվում համերգային փորձերին, դիտարկում պրոֆեսիոնալ մասնագետների աշխատանքները: Ուսանողները հնարավորություն են ունենում իրենց կատարողական հմտությունները զարգացնելու նաև համերգային ծրագրերին պատրաստվելու շրջանակներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասավանդողի որակավորում շնորհող ծրագրերում ուսանողները վերջին տարիներին մանկավարժական պրակտիկա չեն անցել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ պրակտիկան ամբողջությամբ իրականացնում և վերահսկում է պրակտիկայի բաժնի ղեկավարը: Մինչև 2024թ. սեպտեմբերը՝ պրակտիկայի օրագրերը ներառել են միայն տվյալ դասի թեման և ամսաթիվը, դասախոսի կարճ համառոտ բնութագիրը ուսանողի մասին, վերջում՝ գնահատականը դասախոսի կողմից: 2024թ. հոկտեմբերին մշակվել է պրակտիկայի նոր օրագիր, որն արդեն իր մեջ ներառում է պրակտիկայի վայրը, ժամանակահատվածը, կատարած աշխատանքների բովանդակությունը, գնահատման բազմագործոնային բաղադրիչները և չափանիշները՝ ժամանակին ներկայացում, որակ, հաճախում, ակտիվություն: Մշակված օրագրերի կիրառումը նախատեսվում է առաջիկայում: Պրակտիկայի գնահատման ձևը ստուգարքն է և ստուգարք ստանում է այն ուսանողը, որն անցել է պրակտիկա, օրագրում ունի լրացումներ: Սահմանված կարգով նախատեսված է նաև պրակտիկայի հաշվետվության ներկայացում, սակայն այցից պարզ դարձավ, որ հաշվետվություններ չեն ներկայացվում:

Բոլոր կրթական ծրագրերում ուսանողները հանձնում են պետական ամփոփիչ քննություններ, օրինակ՝ «Երգեցողություն» կրթական ծրագրի ուսանողները՝ Երգեցողություն և կատարողական պրակտիկա, Վոկալ համույթ, «Երաժշտական գործիքների կատարողական արվեստ» կրթական ծրագրի ուսանողները՝ Մասնագիտություն և կատարողական պրակտիկա, համույթ, «Երաժշտության տեսություն» կրթական ծրագրի ուսանողները՝ Երաժշտատեսական առարկաներ և երաժշտական գրականություն: Քննական հարցաշար, որպես այդպիսին կիրառվում է միայն «Երաժշտության տեսություն» կրթական ծրագրի համար: Ամփոփիչ հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում առկա են և՛ տեսական գիտելիքները, և՛ գործնական հմտությունները ստուգող հարցեր:

Փորձագիտական ուսումնասիրություններից և հարցաշարերի դիտարկումից պարզ դարձավ, որ ամփոփիչ ատեստավորման քննություններում շեշտադրվում են ուսանողների կատարողական հմտությունների գնահատումը, և չեն շեշտադրվում մանկավարժական կարողությունների ստուգումը:

«Ուսանողների գիտելիքների և կարողությունների ստուգման և գնահատման քաղաքականություն և ընթացակարգ» փաստաթղթում սահմանված են նաև գնահատականի բողոքարկման ձևերը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջում գնահատականի բողոքարկման մեկ դեպք գրանցվել է, երբ վոկալի բաժնի ուսանողը իր գնահատականը բարձրացրել է:

2023թ.-ից Քոլեջում ներդրվել է «Բենչմարքինգի (համեմատական վերլուծության) քաղաքականություն և ընթացակարգը»: Ըստ Ինքնավերլուծության՝ Քոլեջը կրթական ծրագրերի բենչմարքինգ է իրականացրել «Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտակա քոլեջի», «Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի քոլեջի» և ընթացքի մեջ է «Թբիլիսիի Եվգենի Միքալաձեի անվան երաժշտական ուսումնարանի» հետ: Սակայն, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործընթացները չեն փաստաթղթավորվել, ինչպես նաև դրանց արդյունքում կրթական ծրագրերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Քոլեջը մշակել է «Կրթական ծրագրերի գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթուղթը: Փորձագիտական այցից պարզվեց, որ ՄԿԾ-ների փոփոխությունների վերաբերյալ քննարկումները տեղի են ունենում ամբիոններում, որոնց արդյունքում փոփոխվել են տեսական և գործնական ժամերի բաշխումները: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվությունների վերլուծություն քոլեջը չի իրականացրել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների ցուցաբերած արդյունքները քննարկվում են փակ դիտումներից ու լսումներից հետո:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջի կրթական ծրագրերն արտացոլում են հաստատության առաքելությունը՝ ապահովելով երաժշտության տարբեր ուղղություններով մասնագետների պատրաստում: Այս բազմազանությունը կարևոր է մասնագիտական կրթական համակարգի կայուն զարգացման և երաժշտական մշակույթի պահպանման համար:

Քոլեջի կողմից նոր մասնագիտությունների ներդրման ծրագրերը վկայում են աշխատաշուկայի կարիքներին արձագանքելու պատրաստակամության մասին: Սակայն մասնագիտությունների ընտրության համար աշխատաշուկայի համակարգային ուսումնասիրություն չի իրականացվել, ինչը կարող էր բարձրացնել ներդրվող ծրագրերի արդյունավետությունը: Քոլեջի կողմից աշխատաշուկայի պարբերական վերլուծության մեխանիզմների կիրառումը կնպաստի ոլորտային աշխատաշուկայի կարիքների պարբերական վերհանմանը և արդյունավետ արձագանքմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում ուսումնական պլաններում մասնագիտական դասընթացների գործնական բաղադրիչի գերակշռությունը, ինչը կարևոր է կատարողական հմտությունների զարգացման համար: Միևնույն ժամանակ, հանրակրթական առարկաների տեսական և գործնական ժամաքանակների բաշխման անհամաչափությունը չի հստակեցվել: Այս տարբերությունների վերանայումը և հիմնավորված կարգավորումը կապահովի կրթական ծրագրերի համահունչությունը ՊԿՉ-ներին և կապահովի սահմանված ուսումնառության ադրյունքների ձեռբերումը:

Քոլեջը որդեգրել է աստիճանական բարդացման սկզբունքը ուսանողների անհատական ծրագրերը կազմելիս, ինչը թույլ է տալիս հաշվի առնել նրանց անհատական ունակությունները, ապահովել անհրաժեշտ հետադարձ կապ մասնագիտական հմտությունների ձևավորման և կատարողական կարողությունների զարգացման նպատակով:

Բացի այդ, ուսանողներին տրամադրվում են հետազոտական առաջադրանքներ, ինչը խթանում է նրանց երաժշտական վերլուծական մտածողությունը: Այնուամենայնիվ, հետազոտական բաղադրիչի խորությունը սահմանափակվում է հիմնականում ռեֆերատային ձևաչափով, և բացակայում են ակադեմիական ազնվության պահպանման մեխանիզմները: Քոլեջը կարող է վերանայել հետազոտական աշխատանքների իրականացման պահանջները, սահմանել հետազոտական աշխատանքների գնահատման հստակ չափանիշներ՝ դրանք ավելի խորքային և կիրառական դարձնելու համար:

Ուսանողների գնահատումն իրականացվում է 10 միավորային համակարգով: Կատարողական մասնագիտություններում կիրառվում է լսումների ձևաչափը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը շեշտադրում է մանկավարժական կարողությունների գնահատման կարևորությունը՝ հաշվի առնելով, որ դասավանդողի որակավորում շնորհող կրթական ծրագրերի համար մանկավարժական հմտությունների ստուգումը պետք է լինի կրթական ծրագրերի պարտադիր բաղադրիչ:

Պրակտիկայի նոր օրագրի մշակումը դրական քայլ է, որը կնպաստի ուսանողների ձեռքբերած փորձի առավել համակարգված գնահատմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ գնահատման չափանիշների հստակեցումը, ուսանողների կողմից օրագրերի լրացումն ու հաշվետվությունների պատրաստումը կնպաստեն պրակտիկայի գնահատման օբյեկտիվության բարձրացմանը և ուսանողների արդյունավետ ուսումնառությանը:

Քոլեջում ներդրված բենչմարքինգի քաղաքականությունը կարող է նպաստել ծրագրերի շարունակական բարելավմանը, սակայն դրա փաստաթղթային ձևակերպման և գործընթացների հստակեցման բացակայությունը թույլ չի տալիս գնահատել դրա արդյունավետությունը: Եթե բենչմարքինգի արդյունքները վերլուծվեն և դրանց հիման վրա բարելավումներ իրականացվեն, դա կնպաստի կրթական ծրագրերի արդիականացմանը, լավագույն փորձի տեղայնացմանը, ինչը հնարավորություն կստեղծի ուսանողների շարժունության իրականացման համար:

Փորձագիտական խումբը գտնում է նաև, որ Քոլեջն անհրաժեշտություն ունի պարբերաբար տվյալներ հավաքագրելու կրթական ծրագրերի իրականացման վերաբերյալ, ինչը թույլ կտա իրականացնել հիմնավորված բարելավումներ: Այսպիսի համակարգված մշտադիտարկումը և պարբերական վերլուծությունը կապահովեն կրթական ծրագրերի շարունակական կատարելագործում և միջազգային լավագույն փորձի ներդրում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն իրականցնում է իր առաքելությանը և պետական կրթական չափորոշիչներին համահունչ կրթական ծրագրեր, դասախոսները հիմնականում կիրառում են մասնագիտական առանձնահատուկ դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդներ, առաջադրանքները կազմված են աստիճանական բարդացման սկզբունքով և հաշվի են առնում ուսանողների ունակությունները, դասախոսները տրամադրում են անհրաժեշտ հետադարձ կապ ուսանողների արդյունավետ ուսումնառության ապահովման նպատակով՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը համապատասխանում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

ՄՈՒՀ-ում գործում է Ուսանողների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման քաղաքականություն: Ուսանողների հավաքագրման նպատակով ՄՈՒՀ-ում տարբեր մեխանիզմներով իրականացվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ, այդ թվում՝ բաց դռների օրեր, այցելություններ Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցներ: Ուսանողների հավաքագրման մեթոդներն են երաժշտական դպրոցներում քոլեջի դասախոսների կողմից վերպետության դասերի անցկացումը, դասախոսների խորհրդատվությունները դիմորդներին, մենահամերգներին, դասարանական համերգներին աշակերտների ներգրավումը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման միջոցառումներում ներգրավված են տնօրենը, կարիերայի ուղղորդման պատասխանատուն, բաժինների վարիչները և ՊԴ կազմի ներկայացուցիչները: Դիմորդների՝ դեպի քոլեջ ուղղորդման գործում կարևոր դեր ունեն նաև շրջանավարտները, որոնք ներգրավվում են իրականացվող միջոցառումներում, ինչպես նաև երաժշտական դպրոցներում աշխատելով՝ ուղղորդում են իրենց աշակերտներին: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջն ընդունելության մասին տեղեկատվությունը հրապարակում է Ֆեյսբուք սոցիալական ցանցում:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ վերջին տարիներին Քոլեջում դիտվում է դիմորդների թվի դինամիկ աճ՝ հատկապես «Երգեցողություն» և «Ժողովրդական գործիքներ» մասնագիտությունների գծով: «Երգեցողություն» մասնագիտությամբ ուսանողների թիվն աճել է հետևյալ կերպ՝ 2019-2020 ուսումնական տարում՝ 152 ուսանող, 2021-2022 ուսումնական տարում՝ 155 ուսանող, 2022-2023 ուսումնական տարում՝ 156 ուսանող, իսկ 2023-2024 ուսումնական տարում՝ 179 ուսանող: «Ժողովրդական գործիքներ» մասնագիտությամբ ուսանողների թվի փոփոխությունը հետևյալն է՝ 2019-2020 ուսումնական տարում՝ 93 ուսանող, 2020-2021 ուսումնական տարում՝ 140 ուսանող, 2021-2022 ուսումնական տարում՝ 120 ուսանող, 2022-2023 ուսումնական տարում՝ 96 ուսանող, և 2023-2024 ուսումնական տարում՝ 117 ուսանող: Քոլեջի ներկայացուցիչների դիտարկմամբ՝ այս աճը պայմանավորված է վերջին տարիների բարեփոխումներով և պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական գործունեությամբ:

Միևնույն ժամանակ, «Երաժշտության տեսություն» մասնագիտությամբ դիմորդների թիվը տարեցտարի նվազում է, և 2024-2025 ուսումնական տարվա դրությամբ այս մասնագիտությամբ սովորում է ընդամենը 4 ուսանող:

Ըստ ինքնավերլուծության տվյալների՝ քոլեջի ուսանողների թիվը 2019-2020 ուսումնական տարում կազմել է 323, 2020-2021 ուսումնական տարում՝ 414, 2021-2022 ուսումնական տարում՝ 388, իսկ 2023-2024 ուսումնական տարում՝ 428 ուսանող: Ներկայումս քոլեջում սովորում է 409 ուսանող, որից 3-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող են:

Վերջին 5 տարիների վերլուծությունները ցույց են տալիս, որ ուսանողների հեռացումների հիմնական պատճառներ են հանդիսացել քոլեջի Ներքին կարգապահական կանոնների խախտումը, մասնավորապես՝ մեծ թվով բացակայություններ, անբավարար առաջադիմություն ունենալը, ոչ պատշաճ վարքի դրսևորումը, ուսման վարձի պարտքը: Տվյալների վերլուծության արդյունքում կարելի է նշել, որ դուրս մնացած ուսանողների տոկոսը նվազման միտում ունի՝ 2019-ին 15.47%-ից 2023-ին 2.57%, մինչդեռ վերականգնված ուսանողների տոկոսը տատանվել է՝ 2019-ին 3.7%-ից հասնելով 2023-ին 9.8%:

Քոլեջն ուսանողների կրթական կարիքների գնահատման մեխանիզմ է դիտարկում Կրթության որակի պատասխանատուի կողմից իրականացվող հարցումները, ֆոկուս խմբային քննարկումները: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ այս մեխանիզմների կիրառման պարբերականությունը հստակ չէ, առկա չեն այսկերպ վերհանված և լուծում ստացած խնդիրների օրինակներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները կրթական միջավայրի բարելավման համատեքստում կարևորում են երաժշտական գործիքների համալրումը, ռեսուրսների արդիականացումը:

Ուսանողների կարիքների վերհանման գործընթացում կարևոր օղակ է նաև ՈՒԽ-ն: ՈՒԽ-ի կանոնադրությունը մշակվել է 2019 թվականին, և սահմանվել են գործունեության հստակ նպատակներն ու խնդիրները: ՈՒԽ-ն բաղկացած է 15 հիմնական անդամներից, որոնք ձևավորվում են քոլեջի տարբեր մասնագիտություններով սովորող ուսանողներից: Հատկանշական է, որ ՈՒԽ-ն համագործակցում է կուրսերի ավագների հետ՝ իրազեկման աշխատանքներն իրականացնելու նպատակով: ՈՒԽ-ի հրավիրված բոլոր նիստերն արձանագրվում են: ՈՒԽ-ն ակտիվորեն համագործակցում է քոլեջի տնօրենի, տնօրենի տեղակալների, բաժինների վարիչների, Կարիերայի և Որակի ստորաբաժանումների պատասխանատուների հետ: ՈՒԽ-ն հաշվետու է տնօրենին: Ուսանողներն իրենց իրավունքների ու պարտականությունների մասին տեղեկանում են ուսումնական տարեսկզբին կնքվող պայմանագիրը ստորագրելու ժամանակ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՒԽ-ն ուսումնական տարվա սկզբին կազմակերպում է առաջին կուրսեցիների դիմավորման, իրազեկման միջոցառումներ: ՈՒԽ-ն իր անդամների միջոցով քոլեջի մյուս ուսանողներին փակ խմբերի միջոցով իրազեկում է քոլեջի ընթացիկ միջոցառումների մասին: Ուսանողական խորհուրդն իր կողմից նախատեսվող միջոցառումներն ամրագրում է տարեկան աշխատանքային պլաններում՝ նշելով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետները և պատասխանատուներին:

Քննարկում և պլանավորում է առաջին կուրսի ուսանողներին ուսանողական տոմսերի հանձնման միջոցառումը, տարվա ընթացքում ըստ ուսանողների առաջարկների պլանավորում է համերգների, ներկայացումների մասնակցելը: ՈՒԽ-ի ներկայացուցիչները ներգրավված են նաև քոլեջի կառավարման մարմիններում:

Քոլեջում գործում է Ուսանողական նպաստների, պետական և ներքոլեջային կրթաթոշակների հատկացման կանոնակարգ: Ըստ կանոնակակարգի՝ կրթաթոշակները տրամադրվում են առավել աչքի ընկնող, ուսումնառության ընթացքում անընդմեջ գերազանց առաջադիմություն, հասարակական և ստեղծագործական ակտիվություն ցուցաբերած ուսանողներին: Քոլեջի ուսանողների համար անվանական կրթաթոշակ է սահմանել ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, քոլեջի շրջանավարտ Աննա Ասատրյանը: Ինչպես նաև քոլեջի ուսանողները հնարավորություն ունեն հավակնելու Լուսինե Զաքարյանի անվանական կրթաթոշակին:

ՄՈՒՀ-ում իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնց համար սահմանված է հստակ ժամանակացույց: Ըստ քոլեջի ինքնավերլուծության՝ ուսանողների 30%-ն ընդգրկված է խորհրդատվական պարապմունքներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի մասնագիտությունների առանձնահատկություններով պայմանավորված՝ անհատական դասաժամերի ընթացքում ուսանողները հնարավորություն են ունենում անհատապես արձագանք ստանալու իրենց կատարողականության վերաբերյալ: Այցից պարզ դարձավ, որ քոլեջում բացի խորհրդատվություններից ուսանողներին հնարավորություն է տրվում դասախոսների հետ համաձայնեցմամբ անհրաժեշտության դեպքում մասնակցելու լրացուցիչ պարապմունքների՝ կատարողական հմտությունները և տեսական գիտելիքները բարելավելու նպատակով:

Ուսանողների համար նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ քոլեջում չեն իրականացվում, սակայն, ինչպես պարզ դարձավ փորձագիտական հանդիպումներից, ըստ անհրաժեշտության, դասախոսները պատրաստակամ են աջակցելու ուսանողներին, պատասխանելու նրանց հարցերին:

Քոլեջը կազմակերպում է նաև վարպետության դասեր մշակույթի ոլորտի անվանի ներկայացուցիչների հետ, որոնք ուսանողների հետ կիսվում են իրենց փորձով:

ՄՈՒՀ-ում սահմանված չէ վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգ, բայց առկա է ժամանակացույց: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով յուրաքանչյուր աշխատանքային օրվա ընթացքում: Ուսանողները խնդիրների դեպքում դիմում են ուսումնական գծով փոխտնօրենին, բաժինների վարիչներին, երբեմն՝ անմիջապես տնօրենին: Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջը հարցումների միջոցով գնահատել է վարչական անձնակազմից ուսանողների բավարավածությունը, ըստ որի՝ ուսանողների 100%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, 50%-ը օգտվում է, իսկ 40%-ը բավարարված է այդ ծառայություններից:

Քոլեջը կարևորում է ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում՝ նպաստելով նրանց վերլուծական մտածողության զարգացմանը: Յուրաքանչյուր ստեղծագործական աշխատանքի մեկնարկից առաջ ուսանողները կատարում են ուսումնասիրություններ՝ անդրադառնալով թեմայի և տեխնիկայի մանրամասն վերլուծությանը: Այնուամենայնիվ, այս առաջադրանքների իրականացումը հիմնականում կախված է դասախոսների դասավանդման մոտեցումներից ու առանձնահատկություններից:

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է կարիերայի ստորաբաժանում, որն իր գործունեությունը ծավալում է հաստատված կանոնակարգի և տարեկան պլանի համաձայն: Կարիերայի պատասխանատուն դիտարկում է ոլորտում առկա թափուր աշխատատեղերը, տեղեկացնում ուսանողներին առկա հնարավորությունների մասին: Ուսանողներն այցելում են նաև աշխատանքի տոնավաճառների, կրթական ցուցահանդեսների և մասնագիտական կողմնորշմանը միտված միջոցառումների:

Կարիերայի ստորաբաժանման կողմից կազմակերպվում են ուսանողների կարողությունների զարգացմանը միտված դասընթացներ՝ ինչպես ներկայանալ աշխատանքային հարցազրույցի, մրցունակ կենսագրական կազմելու, աշխատանք փնտրելու, հաղորդակցման հմտությունների զարգացման, մոտիվացիայի և այլ թեմաներով: 2021 թվականից կարիերայի ուղղորդման միջոցառումների շրջանակում իրականացվել են մի շարք դասընթացներ՝ ստեղծագործական, կատարողական հմտությունների զարգացման, հաղորդակցման, իրազեկվածության վերաբերյալ:

Անհրաժեշտ է նշել, որ կարիերայի պատասխանատուն վարում է հստակ վիճակագրական բազա իրականացված միջոցառումների, մասնակցության տվյալների մասին:

Կարիերայի պատասխանատուն իրականացրել է իր գործունեության արդյունքների վերլուծություն, որտեղ ներկայացվել են վերջին տարիներին ուսանողների և շրջանավարտների զբաղվածության տվյալները, որոնք աշխատանքի են անցել կարերայի պատասխանտուի օժանդակությամբ: Շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2019-2020 ուս. տարվա 73 շրջանավարտներից 25-ը, 2020-2021 ուս. տարվա 83 շրջանավարտներից 31-ը, 2021-2022 ուս. տարվա 110 շրջանավարտներից 28-ը, 2022-2023 ուս. տարվա 97 շրջանավարտներից 31-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, որոշ դեպքերում՝ այլ մասնագիտությամբ: Ներկայացված տվյալների համաձայն՝ 2020-2023 թթ. իրենց մասնագիտությամբ աշխատում են 44, ոչ մասնագիտությամբ՝ 115 շրջանավարտ: Զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն դիրքերում են գտնվում «Ժողովրդական գործիքներ», «Երգեցողություն» ՄԿԾ-ները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ու շրջանավարտներն աշխատում են Հանրապետության արվեստի և երաժշտական դպրոցներում, «Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի համույթներում, մասնավոր մշակութային և կրթական կազմակերպություններում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարիերայի ուղղորդման պատասխանատուն պարբերաբար թարմացնում է շրջանավարտների բազան, ապահովում

հետադարձ կապ։ Շրջանավարտները նաև ընդգրկվում են քոլեջի ընթացիկ միջոցառումների կազմակերպչական աշխատանքներում, մասնակցում են վարպետության դասերին։

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը գնահատվում է անանուն հարցումների միջոցով։ Սակայն փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ոչ բոլոր ուսանողներն են մասնակցում հարցումներին։ Հարցումներին մասնակցության և ներկայացուցչականության վերաբերյալ տվյալները չեն վերլուծվել հաստատության կողմից։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջը քայլեր է իրականացնում ուսանողներին աջակցող կրթական միջավայրի ձևավորման ուղղությամբ։ Քոլեջում իրականացվող մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումները նպաստում են դիմորդների ներգրավմանը և մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրության աճին, ինչի վկայությունն է «Երգեցողություն» և «Ժողովրդական գործիքներ» մասնագիտությունների դիմորդների թվի դինամիկ աճը։

Ուսանողների աջակցման համար կարևոր դեր ունեն Ուսանողական խորհուրդը և կարիերայի պատասխանատուն, որոնք կազմակերպում են տեղեկատվական, մշակութային և կարիերային նպաստող միջոցառումներ։ Քոլեջում սահմանված կրթաթոշակային ծրագրերը խրախուսում են ուսանողների առաջադիմությունը, ինչպես նաև ուսանողներն ակտիվորեն մասնակցում են հանրապետական մրցույթ-փառատոններին՝ ցուցաբերելով բարձր արդյունքներ։

Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների կարիքների գնահատման գործընթացների հետևողական պլանավորումը և դրանց արդյունքների վերլուծության խորացումը կնպաստի ուսումնական միջավայրի շարունակական բարելավմանը։ Հարցումների և ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքների մանրամասն վերլուծությունն ու դրանց հիման վրա կոնկրետ բարելավման գործողությունների իրականացումը կխթանեն ուսանողների ակնկալիքներին համահունչ կրթական միջավայրի ձևավորումը։

Ուսանողների օտար լեզուների կարողությունների զարգացմանն ուղղված լրացուցիչ պարապմունքների կազմակերպումը կարող է նպաստել նրանց միջազգային կրթական և մասնագիտական հնարավորությունների ընդլայնմանը՝ մեծացնելով նրանց մրցունակությունն աշխատաշուկայում։

Կարիերայի ստորաբաժանման իրականացրած աշխատատեղերի ուսումնասիրության և ուսանողների կարողությունների զարգացման դասընթացների ավելի լայնածավալ իրականացումը կարող է ապահովել շրջանավարտների մասնագիտական զբաղվածության բարձրացումը։ Շրջանավարտների կարիերայի զարգացման շարունակական մշտադիտարկումը և համապատասխան աջակցության տրամադրումը կնպաստի նրանց մասնագիտական առաջընթացին։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում առկա են ուսանողների հավաքագրման տարատեսակ մեխանիզմներ, դասախոսական կազմը պատրաստակամ է աջակցելու ուսանողների արդյունավետ ուսումնառությանն անհատական խորհրդատվություններ տրամադրելու միջոցով, գործում են կարիերային նպաստող ծառայություններ, ՈՒԽ-ը քայլեր է իրականացնում ուսանողների շրջանում իրավունքների մասին իրազեկվածության բարձրացման ուղղությամբ, քոլեջը նպաստում է ուսանողների ստեղծագործական գործունեության զարգացմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը համապատասխանում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Ըստ քոլեջի 2019-2024թթ.-ի ՌԾ-ի՝ քոլեջն իր առջև նպատակ է դրել ապահովել դասախոսների վերապատրաստումը և որակավորման բարձրացումը: Նշված նպատակի իրագործման համար ՌԾ-ում սահմանվել են հետևյալ քայլերը՝ անցկացնել քոլեջի մանկավարժական անձնակազմի կարիքների և կարողությունների գնահատում, նախաձեռնել մասնագիտական հմտությունների կատարելագործման դասընթացներ՝ հրավիրված հեղինակավոր մասնագետների միջոցով, առանձնակի կարևորություն կարող են ներկայացնել երաժշտության ասպարեզում վաստակաշատ, հանրահայտ և բարձր հեղինակություն վայելող երաժիշտների հետ հանդիպումների կազմակերպումը, խորհրդատվությունը և կարճաժամկետ դասընթացների անցկացումը: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը քայլեր է իրականացրել հրավիրված մասնագետների միջոցով վարպետաց դասերի, կարճաժամկետ դասընթացների կազմակերպման ուղղությամբ: Հարկ է նշել, որ 2024-2029 թթ. ՌԾ-ում նշված ուղղությունները շարունակում են մնալ շեշտադրված:

Քոլեջում սահմանված է «Մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման ընթացակարգ»՝ հիմնված ԿԳՄՍ նախարարի 2020թ. 48-Ն հրամանի վրա, որն է՝ «Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական պետական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացման կարգը»: Մրցութային կարգով թափուր հաստիքի համալրման մասին ամրագրված է նաև քոլեջի «Մարդկային ռեսուրսների կառավարման» քաղաքականության և ընթացակարգի մեջ, ըստ որի՝ մրցույթին մասնակցող անձից պահանջվում են բարձր մասնագիտական գիտելիքներ, աշխատանքային ունակություններ և կարողություններ

(շփումներ, ներկայացուցչություն և այլն)։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների համալրման համար մրցույթ չեն անցկացնում, այլ, ելնելով մասնագիտությունների յուրահատկություններից, քոլեջը հիմնականում համագործակցում է հրավիրյալ մասնագետների հետ, անցկացնում է մասնագիտական մեթոդական հարցազրույց, գործնական ստուգում և կոլեգիալ որոշման արդյունքում ընդունում աշխատողներին։

Դասավանդման գործընթացում Քոլեջը ներգրավում և համագործակցում է գործատուների և պրակտիկ ոլորտի ներկայացուցիչների հետ։ Ներկայումս քոլեջում դասավանդում է 4 գործատու։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի շրջանավարտներից 50-ը ներկայումս աշխատում են քոլեջում որպես դասախոս, իսկ 13-ը՝ նվազակցող։

2024-2025 ուստարում քոլեջում դասավանդում են 150 դասախոս, որոնցից 144-ը ունեն բարձրագույն, իսկ 6-ը՝ միջին մասնագիտական կրթություն, ընդ որում՝ 45-ը աշխատում են համատեղությամբ։ Քոլեջն ունի 4 պրոֆեսոր, 7 գիտությունների թեկնածու դասախոս։ Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դասախոսների մասնագիտական որակավորումները համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը նվազագույնը դասավանդում է 1, իսկ առավելագույնը՝ 5 մոդուլ և/կամ առարկա։

Քոլեջում առկա է 2022թ. հաստատված «Դասավանդման որակի գնահատման՝ դասալսումների» կանոնակարգ, որում ներկայացված է դասավանդման որակի գնահատման գործընթացի նշանակությունը, գնահատման գործիքները, պարբերականությունը, դասալսումների կազմակերպումը և այլն։ Փաստաթղթում ներկայացված են նաև «Դասընթացի որակից ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթը», «Դասավանդման մշտադիտարկման և գնահատման ձևաթերթը», «Դասընթացի անցկացման չափանիշները», «Դասալսումների անցկացման ուղեցույցը», ինչպես նաև դասալսման ձևաթերթը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսի գնահատման մեխանիզմներից մեկը դասալսումն է, որը հիմնականում իրականացնում են փոխտնօրենները, կրթության որակի պատասխանատուն և բաժնի վարիչները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում դասալսումների ժամանակացույց առկա չէ, ներքոլեջային փորձի փոխանակման միջոցառումները հստակ պլանավորված և կանոնակարգված չեն, սակավ են դասախոսների միջև փոխադարձ դասալսումները։ Դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոններում դասախոսների հետ։ Դասալսման ձևաթերթով հիմնականում սահմանված չափանիշներն են դասընթացի արդյունավետ անցկացումը, մատուցվող նյութի համապատասխանությունը օրացուցային պլանին, տեխնիկական միջոցների օգտագործումը, դասի կարգապահությունը, ուսանողների մասնակցության աստիճանը, նյութի մատուցման տրամաբանական հաջորդականությունը, մատչելիությունը և այլն։ Ըստ «Դասավանդման որակի գնահատման՝ դասալսումների» կանոնակարգի՝ դասալսումները կազմակերպվում են Որակի վերահսկման հանձնաժողովի կողմից, որից հետո կազմվում է վերլուծական հաշվետվություն ինչպես բաժնի վարիչի, այնպես էլ կրթության որակի պատասխանատուի

կողմից, իսկ արդյունքների վերլուծություն կատարվում է որակի պատասխանատուի կողմից, ով հաշվետվություն է ներկայացնում տնօրենին և հանդես է գալիս առաջարկություններով: Դասալսումների ընթացքում վերհանված խնդիրները հիմնականում վերաբերում են կազմակերպչական հարցերին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի գնահատումն իրականացվում է նաև ուսանողների շրջանում հարցումների միջոցով, սակայն այդ հարցումները պարբերական բնույթ չունեն, և արդյունքների վերլուծությունների հիմքով բարելավումների օրինակներ դեռևս առկա չեն: Հարցումների արդյունքների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում գոհ են իրենց դասախոսներից և ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ դժգոհություններ չունեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսները լրացնում են նաև ինքնագնահատման թերթիկ, որը կազմված է 11 հարցից: Թերթիկում ներառված են այնպիսի հարցեր, ինչպես, օրինակ, պաշտոնի նկարագրով սահմանված ո՞ր գործառույթներն եք առավել որակով անում կամ ո՞ր գործառույթների մեջ եք թերանում, գիտելիքների և կարողությունների բարելավան կարիք ունե՞ք, մասնագիտական վերապատրաստման մասնակցել ե՞ք, անմիջական ղեկավարի հետ արդյունավե՞տ եք աշխատում, մասնագիտական առաջխաղացման ձգտումներ ունե՞ք:

Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Քոլեջը ֆինանսական միջոցներ չի հատկացրել դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար, բայց քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված մեթոդական վերապատրաստումներին: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը մասնագիտական վերապատրաստման անհրաժեշտություն է տեսնում: Դասախոսական կազմի զարգացման նպատակով քոլեջի նախաձեռնությամբ կազմակերպվում են վարպետաց դասեր ոլորտի անվանի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ հարկ է նշել, որ դասախոսական կազմը երիտասարդացման միտում ունի: Պայմանագրերը դասախոսների հետ կնքվում են անժամկետ՝ ամեն տարի նոր համաձայանագրում նշելով տվյալ տարվա դասաբաշխումը: Դասախոսների միջին տարիքը կազմում է 52 տարեկան: Քոլեջը կայունության ապահովման նպատակով ունի դասախոսների պահուստային բազա:

Քոլեջի հաստիքային վարչական աշխատակիցներն իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց՝ ներգրավված են նաև դասավանդման գործընթացներում և 8 վարչական աշխատող միաժամանակ նաև դասավանդում է:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը համերգների միջոցով ապահովում է դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացը: Եղել են նաև առաջխաղացման դեպքեր, երբ նվազակցողը դարձել է դասախոս:

Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությամբ քոլեջն առանձնացրել է անձնակազմի խրախուսման որոշ չափանիշներ, ինչպիսիք են աշխատանքի արդյունավետ

իրականացումը, մրցույթներում, համերգներում հաջողությամբ հանդես գալը: Քոլեջը Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի հիմնադրման 100-ամյա հոբելյանի կապակցությամբ քոլեջի 26 աշխատակիցներ խրախուսվել են շնորհակալագրերով, պատվոգրերով, միայն 2024թ. 5 դասախոս ստացել է ֆինանսական պարգևատրում:

Քոլեջում գործող ամբիոններն աջակցություն են ցուցաբերում մասնավորապես սկսնակ մասնագետների շարունակական ուսուցման և կայացման հարցերում, ապահովում են անհրաժեշտ պայմաններ և օգնություն, ինչպես նաև մասնագիտական խորհրդատվություն: Սկսնակ դասախոսներին աջակցության տրամադրման և մենթորության իրականացման մեխանիզմները դեռևս ամրագրված չեն հաստատության կանոնակարգերում:

Քոլեջն ունի նաև բավարար ուսումնաօժանդակ և վարչական կազմ, որոնց գործառույթները սահմանվում են պայմանագրերով, պաշտոնների նկարագրերով և ստորաբաժանումների կանոնադրություններով: Բոլոր հաստիքները համալրված են:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակավորում և փորձառություն ունեցող դասախոսական կազմով, ինչը նպաստում է մասնագիտական կրթության բարձր մակարդակի պահպանմանը: Հատկապես կարևոր է, որ դասավանդողներից շատերն իրենք քոլեջի շրջանավարտներ են, ինչն ապահովում է հաստատության ներսում ձևավորված մասնագիտական ժառանգության պահպանումն ու զարգացումը:

Քոլեջը նաև ներգրավում է գործատուների և պրակտիկ ոլորտի ներկայացուցիչների դասավանդման գործընթացում, ինչը նպաստում է կրթության գործնական կողմի ուժեղացմանը և ուսանողների՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան հմտությունների զարգացմանը: Գործատուների ակտիվ մասնակցությունը դասավանդման գործընթացին կարող է դառնալ կարևոր գործոն՝ ուսանողների մասնագիտական կարիերայի ձևավորման և աշխատաշուկայում մրցունակության բարձրացման համար:

Քոլեջը ձեռնարկում է քայլեր դասախոսների մասնագիտական զարգացման ուղղությամբ՝ կազմակերպելով վարպետաց դասեր և հրավիրելով ոլորտի ճանաչված մասնագետների: Այս նախաձեռնությունները կարևոր են դասախոսների մասնագիտական հմտությունների կատարելագործման և ուսուցման որակի բարձրացման համար: Այնուամենայնիվ, դասախոսների վերապատրաստման համար նախատեսված միջոցառումները համակարգված և շարունակական չեն, ինչպես նաև հաստատությունը ֆինանսական միջոցներ չի նախատեսել դրանց համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ եթե Քոլեջը ներդնի դասախոսների վերապատրաստման հստակ քաղաքականություն և մշակի պարբերական վերապատրաստման պլան, դա կնպաստի դասավանդման մեթոդների արդիականացմանն ու կրթության որակի շարունակական բարելավմանը:

Քոլեջն ունի դասախոսների գնահատման մեխանիզմներ, ինչպիսիք են դասալսումները և ուսանողների հարցումները, որոնք կարող են արդյունավետ գործիքներ դառնալ դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատման համար: Սակայն

դասալսումները և ուսանողների հարցումները չունեն հստակ ժամանակացույց և պարբերականություն, իսկ դրանց արդյունքները չեն վերածվում կոնկրետ բարելավումների: Եթե Քոլեջը հստակեցնի դասալսումների և ուսանողների հետադարձ կապի գործընթացները, ինչպես նաև վերլուծի դրանց արդյունքները, ապա հնարավոր կլինի ավելի նպատակային բարելավումներ իրականացնել դասավանդման մեթոդաբանության և ծրագրերի մեջ:

Դրական է նաև, որ Քոլեջն ապահովում է դասախոսների խրախուսման մեխանիզմներ, ինչպիսիք են շնորհակալագրերը, պատվոգրերը և ֆինանսական պարգևատրումները, որոնք խթանում են աշխատակազմի մոտիվացիան: Միևնույն ժամանակ, հաստատությունում սահմանված չեն մենթորության հստակ մեխանիզմներ, որոնք կարող են օգնել սկսնակ դասախոսներին հմտանալու ուսուցման գործընթացում: Քոլեջի կողմից մենթորության քաղաքականություն ներդնումը կնպաստի սկսնակ մասնագետների արագ ինտեգրմանը և մասնագիտական աճին:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև քոլեջի ջանքերը դասախոսական կազմի երիտասարդացման, ռեզերվի ձևավորման ուղղությամբ, ինչը նպաստում է կայունությանը և դասախոսական կազմի սահուն սերնդափոխությանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի անհրաժեշտ որակավորում ունեցող կայուն պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական կազմ, կրթական ծրագրերի իրականացմանն ընդգրկված են ոլորտի գործող, փորձառու-երաժիշտ կատարողներ, որոնց մասնագիտական առաջընթացն ապահովվում է բեմական գործունեության, վարպետաց դասերի, քննարկումների արդյունքում, քոլեջը քայլեր է ձեռնարկում դասխոսական կազմի երիտասարդացման ուղղությամբ, առկա են խրախուսման ու առաջընթացի ապահովման որոշ մեխանիզմներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը համապատասխանում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Հետազոտության ոլորտը հաստատության համար ռազմավարական առաջնահերթություն չի հանդիսանում: Միևնույն ժամանակ, Քոլեջն իր ինքնավերլուծությունում նշում է, որ երաժշտական մասնագիտական ոլորտում «հետազոտության» ներքո կատարողական մասնագիտությունների մասով հարկ է դիտարկել կատարողական կերպարի, սկզբունքների, մեթոդների, ավանդույթների համեմատական

վերլուծությունը, դրանց տեղայնացումը համաձայն մասնագիտական երաժշտական մոտեցումների՝ հետազոտական և ուսումնական գործունեության սերտ շաղկապմամբ:

Քոլեջն ունի հետազոտության, ստեղծագործական և վերլուծական աշխատանքների քաղաքականություն, որում նշված երեք՝ հետազոտական, ստեղծագործական և վերլուծական խնդիրները դիտարկվում են որպես մեկ ամբողջություն: Սահմանվում են ուսանողներին տրվող հանձնարարությունները՝ ուսումնասիրել տվյալ ստեղծագործության դարաշրջանը՝ ոճական, գեղագիտական, պատմական, երաժշտատեսական առումով, ուսումնասիրել նոտային տեքստը, խմբագրական մեկնաբանման խնդիրներն ու բարդությունը, ընտրել ստեղծագործության յուրացման մեթոդները և այլն: Այս համատեքստում ստեղծագործական գործունեության հիմքում պարտադիր պայման է դառնում հետազոտական աշխատանքների իրականացումը թե՛ դասավանդման, թե՛ ուսումնառության տեսանկյունից: Օրինակ, մասնագիտական անհատական պարապմունքների շրջանակում դասախոսի հանձնարարությամբ ուսանողն ուսումնասիրում է տվյալ ստեղծագործության և դրա հեղինակի դարաշրջանին բնորոշ առանձնահատկությունը՝ երաժշտական ձևի, գաղափարի, մտքի և կատարողականի վերլուծությամբ:

Կատարողական մասնագիտություններում հետազոտությունն իրականացվում է կատարողական սկզբունքների, մեթոդների վերլուծությամբ, անհատական աշխատանքի ձևաչափով: Արդյունքում, ստեղծագործությունները կատարվում են յուրովի՝ ներկայացնելով յուրաքանչյուրի կատարման անհատական տեխնիկան:

Հետազոտության որոշակի տարրեր պարունակում են նաև տարբեր մոդուլներով ուսանողներին հանձնարարվող ինքնուրույն աշխատանքները, օրինակ՝ տեսական առարկաների շրջանակներում իրականացվող ռեֆերատները: Ռեֆերատների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հետազոտական բաղադրիչը դեռևս թույլ է արտահայտված, ոչ միշտ են առկա ինքնուրույն վերլուծություններ, եզրակացություններ, հաճախ բացակայում են մասնագիտական գրականության հղումները, գրականության ցանկերը:

Դասալսումներից պարզ դարձավ, որ հետազոտական բնույթի աշխատանքներ պարտադիր կերպով իրականացվում են երաժշտական բոլոր տարրերի և կատարողական հմտությունների վերլուծության ուղղությամբ: Օրինակ, ուսանողը, երբեմն նաև դասախոսի հետ միասին, ունկնդրում է տարբեր կատարողների, լսում համերգներ համերգասրահներում կամ համացանցի միջոցով՝ ուսումնասիրելով տվյալ ստեղծագործությունը, նրա կատարման հնարավոր յուրահատկությունները՝ ձևավորելով տվյալ ստեղծագործության սեփական յուրահատուկ մեկնաբանությունը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջի որոշ դասախոսներ, բացի մանկավարժական գործունեությունից, իրականացնում են անհատական ստեղծագործական գործունեություն՝ հանդես գալով որպես կատարողներ: Միևնույն ժամանակ, որոշ դասախոսներ հանդես են գալիս գիտաժողովներում զեկուցումներով, գիտական հոդվածներով, հեղինակում են ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցներ. Գր. Հարությունյան «Խմբերգային պարտիտուրի վերադաշնակում», Ի. Պարոնյան «Հրաշք դաշնամուր», Հ.

Ասատրյան «Ազգային նվագարանների համույթներ», Մ. Հարությունյան «Ջոներգեր», Գ. Մինասյան «Վիրտոուզ դուդուկ» և այլն:

2024 թվականին Քոլեջի հիմնադրման 100-ամյակին նվիրված ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի և Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի հետ համատեղ իրականացվել է գիտաժողով, որին զեկույցներով մասնակցել են Քոլեջի դասախոսներ, շրջանավարտներ:

Փորձագիտական այցից և մասնագիտական հանդիպումներց պարզ դարձավ, որ դասախոսական կազմի ներկայացուցիչները, որոնք որպես կատարողներ հնարավորություն են ունենում հանդես գալ համերգներով արտասահմանում, որոշակիորեն ծանոթանում են նաև մասնագիտական ոլորտի միջազգային փորձին, որը փորձում են տեղայնացնել: Սակայն նշված գործընթացը փաստաթղթավորված և համակարգված չէ: Հետազոտական աշխատանքների իրականացման խթանման և խրախուսման մեխանիզմներ դեռևս առկա չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ուսանողները ոչ միայն գործնական, այլև վերլուծական փուլեր են անցնում, ինչի շնորհիվ զարգանում է նրանց համակողմանի մտածողությունը և մասնագիտական հմտությունները: Դրական է, որ ստեղծագործական և հետազոտական աշխատանքները զուգորդվում են, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին հիմնավորել կատարման կամ ստեղծագործական լուծումները և զարգացնել ինքնուրույն վերլուծական կարողությունները: Հետազոտական գործունեությանն են նպաստում նաև մշակված մեթոդական ձեռնարկները և ուղեցույցները, որոնք անմիջականորեն կիրառելի են ուսուցման մեջ: Հետազոտական բաղադրիչը խորացնում է ուսանողների բեմական-կատարողական փորձը և խթանում է թիմային ու համագործակցային հմտությունները, իսկ դասախոսների հետաքրքրվածությունը միջազգային փորձով հնարավորություն է տալիս աստիճանաբար ներմուծել ավելի բարձր որակի ծրագրեր և համագործակցություններ:

Այդուհանդերձ, փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ քոլեջի ռազմավարական ծրագրում հետազոտությունը հստակորեն չի նկարագրվել որպես զարգացման ուղղություն, ինչի արդյունքում դեռևս ամբողջական չեն քաղաքականությունն ու ընթացակարգերը, որոնք պետք է ուղղորդեն հետազոտական գործունեության զարգացմանը: Ոչ բոլոր մոդուլներում են սահմանված մեթոդական ցուցումներ և կատարողական աշխատանքների ներկայացման կարգեր, ինչի հետևանքով որոշ ուսանողական աշխատանքներում վերլուծական կողմը թույլ է արտահայտված, բացակայում են պատշաճ հղումները և ինքնուրույն եզրակացությունները: Բացի այդ, միջազգային փորձի ներդրումն ու զարգացման ուղղությամբ տարվող ջանքերը առավելապես փաստաթղթավորված չեն, ինչը սահմանափակում է լավագույն պրակտիկաների համակարգված ներմուծումը և ընթացիկ կիրառությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի հետազոտության իրականացման մոտեցումներ երաժշտության ոլորտում, ուսանողներին տրվող առաջադրանքներում արտահայտված է հետազոտական աշխատանքի և ուսումնառության կապը, առկա են ստեղծագործական միջավայրի ձևավորման և տարածման մեխանիզմներ, դասախոսական կազմն իրականացնում է հետազոտական և մեթոդական գործունեություն՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 6-ի պահաջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջն ունի 2243.8մ² ընդհանուր մակերեսով տարածք, որտեղ տեղակայված են 36 լսարան, 10 առարկայական կաբինետ, 14 աշխատասենյակ, գրադարան-ընթերցասրահ, արխիվ, ձայնագրման տաղավար, հարմարեցված մարզասրահ, բուժկետ, պահակակետ, արհեստանոց, համերգային դահլիճներ՝ համապատասխան կահավորմամբ:

Լսարանները հիմնականում կահավարված են երաժշտական գործիքներով՝ ռոյալներով. այս լսարաններում իրականացվում են բոլոր մասնագիտական պարապմունքները: Մի շարք մասնագիտական լսարաններ վերանորոգվել են վերջին մի քանի տարվա ընթացքում և անվանակոչվել երաժշտարվեստի նշանավոր գործիչների անուններով՝ Ռ.Ամիրխանյանի, Ռ.Մանգասարյանի, Լ.Զաքարյանի, Ա.Սաթյանի, Կ.Պետրոսյանի, Լ.Չաուշյանի, Ա.Բուդաղյանի, Ա.Ասատրյանի և այլ: Չորրորդ հարկի լսարանները հիմնականում նախատեսված են հանրակրթական (հայոց լեզվի և գրականության կաբինետ, օտար լեզուների կաբինետ, պատմության կաբինետ, ՆԶՊ կաբինետ, այլ) կամ մասնագիտական տեսական առարկաների համար: Բացի ռոյալներից՝ Քոլեջն ունի այլ երաժշտական գործիքներ՝ ֆլեյտա, կիթառ, կոնտրաբաս, սաքսաֆոն, տավիղ և այլ, որոնք ըստ անհրաժեշտության օգտագործում են ուսանողները: Որպես կանոն, ուսանողներն ունեն իրենց անձնական երաժշտական գործիքները: Քոլեջի սեփականություն հանդիսացող երաժշտական գործիքները հիմնականում նոր չեն, սակայն դրանք բավարարում են ուսումնական գործընթացի պահանջներին: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ Քոլեջը կարողանում է օգտագործել նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները, օրինակ, Օպերայի և բալետի ակադեմիական թատրոնից, համաձայնագրի հիման վրա, օգտագործման իրավունքով ստացել է երաժշտական գործիք:

Քոլեջում վերջերս ստեղծվել է ձայնագրման տաղավար՝ համապատասխան տեխնիկական հագեցվածությամբ և ծրագրային ապահովմամբ: Լսարաններից մեկում առկա է

երաժշտական ձայնասկավառակների հավաքածու: Թեև տեսալսողական տեխնիկա լսարաններում առկա չէ, փորձագիտական այցից պարզվեց, որ հարկ եղած դեպքում հնարավոր է լինում կազմակերպել լսումներ կամ դիտումներ դյուրակիր սարքավորումների միջոցով:

Համերգային կահավորված դահլիճներից մեկը, որ նախատեսված է մոտ 40 հանդիսականի համար, կրում է Առնո Բաբաջանյանի անունը: Կիսանկուղային հարկում գործում է մեկ այլ՝ «Ռոմանոս Մելիքյան» համերգասրահ, որը ծառայում է և՛ որպես լսարան ընթացիկ պարապմունքների համար, և՛ որպես համերգային դահլիճ: Հարևանությամբ, Գրականության և արվեստի թանգարանի հետ համագործակցությամբ, հիմնադրվել է Ռոմանոս Մելիքյանի թանգարան-ցուցասրահը, որտեղ ներկայացված են անվանի գործչի լուսանկարները, փաստաթղթեր. սրահում հնարավոր է լինում իրականացնել հանդիպում-քննարկումներ:

Քոլեջի Արուս Բաբալյանի անվան գրադարանը ունի շուրջ 50400 միավոր գիրք, այդ թվում՝ դասագրքեր, գեղարվեստական և մասնագիտական (նոտային) գրականություն, որից՝ ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականությունը շուրջ 49200 միավոր է: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանը չունի գրականության քարտարան (գրացուցակ), առկա գրականությունը հիմնականում մասնագիտական ուղղվածության է: Գրքերի կամ մեթոդական ձեռնարկների համալրումն իրականացվում է նվիրատվությունների հաշվին: Ընթերցասրահում առկա են համացանցային հասանելիությամբ համակարգիչներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջի գրադարանում առկա մասնագիտական գրականությունը բավարարում է ուսումնական գործընթացը պատշաճ կազմակերպելու համար:

Մարզադահլիճ որպես այդպիսին Քոլեջը չունի, սակայն նկուղային հարկում առկա է հարմարեցված սրահ (առկա է թենիսի սեղան, շախմատ), որտեղ անցկացվում են ֆիզկուլտուրայի դասերը:

Փորձագիտական խումբը նկատում է, որ Քոլեջն ունի համակարգիչների, տեսալսողական սարքավորումների ձեռքբերման և արդիականցման կարիք, սակայն չունի բավարար միջոցներ խնդիրը լուծելու համար: Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ նաև, որ Քոլեջն իրականացրել է լսարանային ֆոնդի որոշ վերանորոգումներ, սակայն դեռևս կան բարելավման կարիք ունեցող լսարաններ:

2021-2023թթ. կտրվածքով բյուջետային մուտքերը կազմել են ըստ տարիների՝ 91.0%, 90.0% և 87.87%, իսկ արտաբյուջետային մուտքերը, որոնք հիմնականում ձևավորվում են ուսանողների վարձավճարներից, համապատասխանաբար՝ 9%, 10% և 12%: Ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատավարձերը և տնտեսական ծախսերը, որոնք միասին կազմում են բյուջեի ծախսային մասի 2021-ին՝ 92.67%-ը, 2022-ին՝ 96.34%-ը, 2023-ին՝ 97.60%-ը: Քոլեջի եկամուտների և ծախսերի տվյալների համաձայն՝ 2021թ. կտրվածքով ընդհանուր ծախսերի 89.30%-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին: 2022-ին և 2023-ին աշխատավարձի ֆոնդն աճում է՝ դառնալով համապատասխանաբար 93.39% և 94.84%: Ընդ որում՝ միայն դասախոսական անձնակազմի աշխատավարձի բաժինը նշված տարիներին

կազմում է 62.3%, 69.92%, 69.43%: 2022թ. և 2023թ. դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմերի աշխատավարձի բաժինը գերազանցում է Քոլեջի ծախսերի 90%-ը: Արտաբյուջետային (լրացուցիչ) ֆինանսական մուտքերի կշիռը, որոնք գոյացել են վարձակալական վճարներից և այլ մուտքերից, կազմում են 2022 թվականին 1.5%, 2023-ին՝ 2.02%, 2023-ին՝ 0.2%: Հարկ է նշել, որ բյուջեի պլանավորումը չի իրականացվում զարգացման ռազմավարական ուղղությունների համատեքստում: Քոլեջը ֆինանսական հատկացումներ չի նախատեսում և չի իրականացնում, օրինակ, գրադարանի կամ ուսանողական խորհրդի հետ կապված, ինչպես նաև զարգացման ծրագրերի իրականացման նպատակով:

Քոլեջը կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկ չի իրականացրել և չի հաշվարկել կամ վերլուծել յուրաքանչյուր սովորողի հաշվարկով անհրաժեշտ նվազագույն նյութական և ֆինանսական ռեսուրսները:

Փաստաթղթաշրջանառությունը լիազոր մարմնի հետ իրականացվում է Mulberry համակարգով, իսկ ներքին շրջանառությունը՝ թղթային եղանակով կամ էլեկտրոնային փաստի միջոցով: Տեղեկատվության ներքին փոխանցման համար օգտագործվում են նաև սոցիալական հարթակներում ստեղծված խմբերը: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում դեռևս ներդրված չէ:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ Քոլեջն ունի կենտրոնական ջեռուցման համակարգ: Անվտանգության ապահովման նպատակով առկա են հակահրդեհային սարքավորումներ, պահակակետ, հարկերն ու աստիճանավանդակները հսկող տեսախցիկներ: Հարկերում առկա են տարհանման պլաններ, շենքի նկուղը կարող է ծառայել որպես ապաստարան: Առկա է բուժկետ՝ համալրված առաջին օգնության անհրաժեշտ միջոցներով: Համաձայն ուսանողների և դասախոսների շրջանում իրականացված հարցումների արդյունքների՝ հարցման մասնակիցների կեսից ավելին բարձր են գնահատում բուժկետի ծառայությունների որակը:

Քոլեջում իրականացվել են ռեսուրսներից բավարարվածության հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում, որոնց արդյունքներով ներքին շահակիցներն ընդհանուր առմամբ գոհ են Քոլեջի ռեսուրսային ապահովվածությունից (ուսանողների 64%-ը, դասախոսների 56%-ը): Քոլեջի նյութատեխնիկական հնարավորությունների և ռեսուրսների (շենքային պայմանների) վերաբերյալ հարցմանը մասնակցած 200 ուսանողից 30%-ը միջին գնահատական է տվել, 20%-ը՝ լավ, իսկ 14.5%-ը գնահատել են գերազանց: Հարցման մասնակից ուսանողների 35.5%-ը միջինից ցածր են գնահատել Քոլեջի նյութատեխնիկական հնարավորությունները: Նույնաբովանդակ հարցման արդյունքները դասախոսների շրջանում հետևյալ են. 25%-ը տվել է միջին գնահատական, 47.5%-ը՝ լավ, 12.5%-ը՝ գերազանց, 15%-ը՝ միջինից ցածր են գնահատել Քոլեջի նյութատեխնիկական հնարավորությունները: Դասախոսական հարցմանը մասնակցել է 80 դասավանդող:

Քոլեջի ռեսուրսների արդյունավետության և հասանելիության գնահատման հիմնական մեխանիզմը հարցումներն են, որոնց մեթոդաբանությունն ու պարբերականությունը հստակեցված չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում Քոլեջի մոտեցումն առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոցով կրթական գործընթացի պատշաճ կազմակերպման հարցում: Վերջին տարիներին վերանորոգված մասնագիտական լսարանները և համերգային դահլիճներն ապահովել են ուսումնական միջավայրի բարելավում, ինչը նպաստում է ուսանողների մասնագիտական զարգացմանը: Սակայն փորձագիտական խումբը նշում է, որ անհրաժեշտ է հավելյալ ռեսուրսներ ներդնել շենքային պայմանների և գույքային բազայի արդիականացման համար: Այս ներդրումները կնպաստեն ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը՝ ստեղծելով կրթությանը նպաստող միջավայր և ամրապնդելով հարյուրամյա ուսումնական հաստատության ժամանակակից դիմագիծը:

Քոլեջին հաջողվել է պահպանել երաժշտական գործիքները՝ հատկապես ռոյալներն ու դաշնամուրները, լավ վիճակում՝ չնայած դրանց հնությանը: Սա կարևոր ձեռքբերում է, քանի որ այն ապահովում է ուսանողների մասնագիտական պատրաստվածության անհրաժեշտ պայմանները: Դրական է նաև այն, որ Քոլեջը համագործակցում է շահակից կազմակերպությունների հետ՝ երաժշտական գործիքների և գույքի լրացման նպատակով, ինչը նպաստում է ուսումնական գործընթացի շարունակականությանը: Այնուամենայնիվ, գործիքների նորացման անհրաժեշտությունը մնում է արդիական:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում Քոլեջի գրադարանի կառավարման և արդիականացման խնդիրը: Գրադարանային ծառայությունների արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ներդնել նոր տեխնոլոգիաներ, որոնք ուսանողներին հնարավորություն կտան ավելի լայնորեն օգտվելու թվային ռեսուրսներից: Սա կնպաստի կրթության որակի բարձրացմանը, ինչպես նաև կբարելավի ուսանողների հետազոտական կարողությունները:

Քոլեջի ֆինանսական կառավարումը չի համապատասխանում ռազմավարական ծրագրի առաջնահերթություններին, ինչը կարող է խորընդոտել հաստատության կայուն զարգացման համար: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ բյուջեի մոտ 90%-ը ուղղվում է աշխատակիցների վարձատրությանը, մինչդեռ ռազմավարական նպատակների իրականացման համար բավարար ֆինանսավորում չի նախատեսվում: Բյուջեի բաշխման ռազմավարական վերանայումն ու այլընտրանքային ֆինանսական ռեսուրսների ներգրավումը հնարավորություն կտան Քոլեջին իրականացնել կրթական ծրագրերի բարելավում, ներդնել նոր տեխնոլոգիաներ և ապահովել զարգացման ծրագրերի կայուն իրականացում: Բացի այդ, կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների գնահատումը կապահովի ավելի թափանցիկ և արդյունավետ ֆինանսական կառավարում:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև ռեսուրսների կիրառելիության շարունակաբար գնահատումը և բացահայտված կարիքների հիման վրա բարելավումների իրականացումը՝ օգտագործելով նաև գործընկեր կազմակերպությունների հետ կապերը, ներգրավելով ֆինանսական մուտքերի այլընտրանքային աղբյուրներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ կրթական ծրագրերի իրականացման համար քոլեջն ապահովված է մասնագիտական լսարաններով, կահավորված համերգային սրահներով, անհրաժեշտ երաժշտական գործիքներով, ուսումնական գործընթացը պատշաճ կազմակերպելու համար ունի նյութատեխնիկական բավարար ռեսուրսներ, ստեղծում է ապահով և անվտանգ կրթական միջավայր, հնարավորության սահմաններում փորձում է բարելավել առկա ենթակառուցվածքները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում առկա է հաշվետվողականության ներքևից վերև համակարգ: Քոլեջի ստորաբաժանումները տարեկան կտրվածքով ներկայացնում են իրենց գործունեության հաշվետվությունը տնօրենին: Քոլեջի Կարիերայի ստորաբաժանումը նաև եռամսյա հաշվետվություններ է ներկայացնում ԿԳՄՍ նախարարություն, որտեղ ներկայացվում են տվյալներ շրջանավարտների զբաղվածության, ինչպես նաև կարիերային նպաստող միջոցառումների անցկացման վերաբերյալ: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկայացված հաշվետվությունները հիմնականում փաստահենք են, կրում են նկարագրական բնույթ իրականացված գործընթացների վերաբերյալ:

Տնօրենը հաշվետու է Կառավարման խորհրդին: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տնօրենի հաշվետվությունները չունեն վերլուծական բովանդակություն. դրանք ամփոփ ներկայացնում են տարվա ընթացքում կատարված աշխատանքները, ներկայացնում միջոցառումները: Տնօրենի հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ այս հաշվետվությունները չեն ամփոփում մյուս ստորաբաժանումների աշխատանքները, չեն վերլուծում կատարված գործընթացների ազդեցությունը հաստատության զարգացման վրա, ինչպես նաև չեն անդրադառնում չկատարված գործընթացների պատճառներին:

ՄՈՒՀ-ի Հանրային կապերի քաղաքականությամբ սահմանվում է, որ Քոլեջը կարևորում է իր գործունեության պատշաճ, հրապարակային, արդյունավետ կազմակերպումը և ապահովում է հաշվետվողականության շրջանակի կառավարումը: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քաղաքականության շրջանակում նախատեսված ոչ բոլոր միջոցառումներն են լիարժեք իրականացվում: Մասնավորապես՝

քոլեջը չի ապահովում շահակիցների ներգրավվածությունը երաժշտական կրթության բարելավման և զարգացման գործընթացներում, չկա կայուն և շարունակական համագործակցություն տեղական ԶԼՄ-ների հետ, վերջին տարիների գործունեության լուսաբանումների միասնական ու տեսանելի բազան բացակայում է, մասնագիտական կրթական ծրագրերը սոցիալական հարթակներում պատշաճ կերպով չեն ներկայացվում արտաքին շահակիցներին։

Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջի ընթացիկ միջոցառումների մասին իրազեկելու համար գործում են ֆեյսբուքյան ու ինստագրամյան էջերը՝ համապատասխանաբար 3900 և 693 հետևորդներով։ Ֆեյսբուքյան էջում լուսաբանվում է քոլեջի ընթացիկ գործունեությունը, իրականացվող միջոցառումները, տեղադրվում են հայտարարություններ։ ՄՈՒՀ-ը քայլեր չի ձեռնարկում Ֆեյսբուքյան էջի հետևորդների ավելացման ուղղությամբ, չի վերլուծում դիտումները, հավանումները։

Քոլեջը չունի տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունն ապահովող պաշտոնական կայքէջ։

ՄՈՒՀ-ում գործում են հետադարձ կապի մի քանի մեխանիզմներ՝ Ֆեյսբուք սոցիալական ցանցը, էլեկտրոնային հասցեն, քոլեջի հեռախոսահամարը։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի ֆեյսբուքյան էջի հաղորդագրության հարթակներով հիմնականում օգտատերերը հետաքրքրվում են ընդունելության մանրամասներից, քոլեջի մատուցած լրացուցիչ կրթական ծառայություններից։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շահակիցներին հետադարձ կապ տրամադրում և նամակներին արձագանքում են կարիերայի պատասխանատուն և գործավարը։ Այսուհանդերձ, փորձագիտական դիտարկումներից պարզ դարձավ, որ քոլեջին հասցեագրված հարցումներին սպառիչ պատասխաններ չեն տրամադրվում, նամակին ի պատասխան հաստատությունը տրամադրում է հեռախոսահամար՝ դիմումատուների հարցադրումները կատարելու համար։

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվում են հասարակությանը երաժշտական գիտելիքի և արժեքների փոխանցմանը միտված միջոցառումներ։ Մասնավորապես 2022 թվականին իրականացվել է «Ռոմանոս Մելիքյանն ու ռոմանսի ճանապարհը» ծրագիրը, որը բացկացած էր ութ մարզային համերգներից, որի ընթացքում կատարվել են Ռ. Մելիքյանի ռոմանսները, ինչպես նաև ներկայացվել է ռոմանսի ժանրը՝ ստեղծման շրջանից մինչև մեր օրեր։

2021 թվականից քոլեջում իրականացվել են մի շարք միջոցառումներ և դասընթացներ, որոնք նպաստել են ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը, անձնական զարգացմանը և կարիերայի հնարավորությունների ընդլայնմանը։ Այդ շրջանակում կազմակերպվել են գործնական հմտությունների դասընթացներ («Ինչպես ստեղծել էլ. հասցե», «Գործատուներին ներկայանալու հմտությունները», «Ինչպե՞ս գրել մրցունակ աշխատանքային ինքնակենսագրական»), մասնագիտական կողմնորոշման թեստեր («Մասնագիտական գործունեության նախընտրելի տեսակները. Կլիմովի թեստ», «Ջոն Լ. Հոլլանդի թեստ», «Մասնագիտության համակարգային ընտրություն թեստ»), ինչպես նաև

թիմային աշխատանքի և հաղորդակցման կարողությունների զարգացման սեմինարներ («Թիմ և թիմային աշխատանք», «Հաղորդակցման կարողությունների ձևավորում», «Մոտիվացիա»):

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից կազմակերպվող համերգները ևս բաց են մասնակցության համար. դրանց հաճախ որպես հանդիսատես ներկա են լինում տարբեր դպրոցներից աշակերտները, ինչը նաև հնարավորություն է տալիս մասնագիտական կողմնորոշում ապահովել ապագա ուսանողների համար:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ իրականացվող միջոցառումները հստակորեն պլանավորված չեն, ինչպես նաև հաստատությունը դեռևս չի գնահատել իրականացվող միջոցառումների արդյունավետությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում առկա են հաշվետվողականության մեխանիզմներ, ինչպիսիք են ստորաբաժանումների հաշվետվությունները տնօրենին, ինչպես նաև կարիերայի ստորաբաժանման եռամսյա հաշվետվությունները ԿԳՄՍ նախարարությանը: Սա ստեղծում է նախադրյալներ կառավարման գործընթացների վերահսկման և գործունեության վերլուծության համար: Բացի այդ, Քոլեջը կազմակերպում է հանրային միջոցառումներ, որոնք նպաստում են երաժշտական կրթության հանրայնացմանը և մասնագիտական կողմնորոշման ապահովմանը:

Այնուամենայնիվ, փորձագիտական խումբն արձանագրում է մի շարք գործոններ, որոնք սահմանափակում են Քոլեջի հանրային հաշվետվողականության արդյունավետությունը: Տնօրենի հաշվետվությունները, չնայած փաստահենք լինելու հանգամանքին, չեն պարունակում վերլուծական բաղադրիչ, ինչը խոչընդոտում է հաստատության գործունեության երկարաժամկետ պլանավորմանն ու բարելավմանը: Հաշվետվություններում բացակայում է ստորաբաժանումների գործունեության համադրված գնահատումը, գործընթացների ազդեցության վերլուծությունը և չիրականացված նպատակների պատճառների ուսումնասիրությունը: Վերլուծական բովանդակության ավելացումը կարող է նպաստել Քոլեջի կառավարման թափանցիկությանը և զարգացման հետագա ուղղությունների հստակեցմանը:

Հանրային կապերի քաղաքականության շրջանակում նախատեսված միջոցառումների լիարժեք իրագործման բացակայությունը սահմանափակում է Քոլեջի կողմից հանրային իրազեկվածության բարձրացման ջանքերը: Տեղական ԶԼՄ-ների հետ համագործակցության թույլ լինելը և սոցիալական հարթակներում մասնագիտական կրթական ծրագրերի ոչ ամբողջական ներկայացվածությունը կարող են խոչընդոտել Քոլեջի ճանաչելիության ու հանրային ներգրավվածության ապահովմանը:

Տեղեկատվության հասանելիության ու թափանցիկության առումով խնդիր է պաշտոնական կայքէջի բացակայությունը, ինչը սահմանափակում է արտաքին շահակիցների կողմից Քոլեջի գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ստացումը: Ֆեյսբուքյան էջը, չնայած որոշակի ակտիվությանը, չունի դիտումների, հետևորդների և ներգրավվածության վերլուծություն, ինչը խոչընդոտում է տեղեկատվության տարածման արդյունավետության գնահատմանը: Այս խնդիրների լուծումը, մասնավորապես՝ կայքէջի

ստեղծումը և սոցիալական հարթակների կառավարման ռազմավարական մոտեցման ներդրումը, կնպաստի հանրային կապերի արդյունավետության բարձրացմանը:

Հետադարձ կապի առկա մեխանիզմների՝ սոցիալական մեդիայի, էլեկտրոնային հասցեի և հեռախոսային հաղորդակցության ոչ ամբողջական կիրառումը սահմանափակում է Քոլեջի շահակիցների հետ արդյունավետ հաղորդակցությունը: Հաղորդագրություններին տրամադրվող ոչ սպառիչ պատասխանները նվազեցնում են Քոլեջի նկատմամբ վստահության մակարդակը: Համակարգված հետադարձ կապի ապահովումը կնպաստի շահակիցների պահանջների լիարժեք ըմբռնմանը և դրանց հիման վրա բարելավման գործողությունների մշակմանը:

Հանրային միջոցառումների պլանավորման և դրանց արդյունավետության գնահատման բացակայությունը նվազեցնում է դրանց երկարաժամկետ ազդեցությունը: Չնայած Քոլեջը կազմակերպում է մասնագիտական կողմնորոշմանն ու երաժշտական կրթության հանրայնացմանն ուղղված միջոցառումներ, դրանց ազդեցությունը շահակիցների վրա չի գնահատվում: Արդյունքում՝ այս միջոցառումները չունեն ռազմավարական մոտեցում և մնում են տարաբնույթ նախաձեռնությունների մակարդակում: Նման միջոցառումների պլանավորումը և դրանց ազդեցության վերլուծությունը հնարավորություն կտա Քոլեջին նպատակային և շարունակական ռազմավարություն մշակել հանրային ներգրավվածության և կրթական ծրագրերի հանրայնացման ուղղությամբ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջի հաշվետվողականության համակարգում թույլ է արտահայտված վերլուծական բաղադրիչը, կիրառվող գործիքներն ամբողջովին չեն ապահովում հաստատության վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունն ու հասանելիությունը, շահակիցների հետ հետադարձ կապի համակարգված մեխանիզմները դեռևս ամբողջությամբ չեն գործում, հանրային միջոցառումները չունեն գնահատման գործիքակազմ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի համապատասխանում չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի 2019-2024 թթ. և 2024-2029 թթ. ռազմավարական ծրագրերում արտաքին կապերն ու միջազգայնացումը չեն նշվում որպես առաջնահերթություն կամ հիմնախնդիր: Այնուամենայնիվ, Քոլեջի ռազմավարական ծրագրի

տեսլականում ընդգծվում է մասնագիտական համայնքի հետ համագործակցության կարևորությունը։

Ինքնավերլուծության ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջը նպատակ ունի առաջիկայում ապահովել միջազգայնացման գործընթացները, ինչպես նաև շարունակել արտաքին կապերի համակողմանի զարգացումը, մեծացնել գործընկերային կապերը կազմակերպությունների հետ, պահպանել և զարգացնել 100-ամյա ավանդույթներ ունեցող կրթական հաստատության առաքելությունը։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին կապերի զարգացման և միջազգայնացման ուղղությամբ աշխատանքներ քոլեջում իրականացնում են տնօրենը, Կադրերի պատասխանատուն և Որակի պատասխանատուն։

Հաստատությունը տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցում է Գյումրու Քրիստափոր Կարա Մուրզայի և Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստական քոլեջի հետ։ Այսուհանդերձ, փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ համագործակցությունները դեռևս չեն հանգեցրել կրթական ծրագրերի համեմատական վերլուծության միջոցով լավագույն փորձի տեղայնացմանը։

ՄՈՒՀ-ն ունի շուրջ 15 գործատու գործընկերներ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, որոնց հետ համագործակցության շրջանակներում հաստատությունը կազմակերպում է մշակույթային տարբեր միջոցառումներ, ապահովում ուսանողների պրակտիկաների իրականացումը։ ՄՈՒՀ-ի ամենախոշոր գործատու-գործընկերներից են՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը, Հանրային ռադիոյի Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլը, Նարեկացի արվեստի միություն «ՆՈՎԱ» անսամբլը, Վեն Հոլդինգը, Հայաստանի պարի պետական անսամբլը, Վաղարշապատի Ս.Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոցը, Միքայել Միրզոյանի անվան պետական երաժշտական դպրոցը, Արարատի մարզ Արբատի երաժշտական դպրոցը, Արտաշատ քաղաքի երաժշտական դպրոցը և այլն։ Երաժշտական դպրոցների հետ համագործակցությունը նպաստում է նաև դիմորդների հավաքագրմանը։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ու Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի համագործակցության շրջանակներում «Երգեցողություն» բաժնի ուսանողները ներգրավվել են Ջ. Վերդիի «Աիդա» օպերային ներկայացման, Տ. Չուխաջյանի «Արշակ Բ» օպերային ներկայացումների կազմում։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաստատությունը միջազգային համագործակցության հիմնական ուղղություն է համարում միջազգային մրցույթներին ու փառատոներին մասնակցությունը։ Ուսանողներն ակտիվ մասնակցում են տարբեր մրցույթների և փառատոների, ինչպիսիք են՝ «World Art Games» (2021), «Brussels LE SAISON AU» (2021) «COPENHAGEN STARS 2021», «Առնո Բաբաջանյանի երգերի միջազգային առցանց մրցույթ-փառատոն» 2021, «Առնո Բաբաջանյանի անվան պատանի և երիտասարդ դաշնակահարների մրցույթ-փառատոն» 2021, «Wielkopolski Bells-2022» միջազգային մրցույթ,

«ԱՐՏ ՄՅՈՒԶԻՔ» 2022, «Awyar international Solo Festiva» 2022, «ODESA MUSIC OLIMP» III միջազգային մրցույթ 2023, «ԱՐՏ ՄՅՈՒԶԻՔ» 2023, «RISING STAR» միջազգային մրցույթ փառատոն և այլ նմանատիպ մրցույթները:

ՄՈՒՀ-ը ներկայումս քայլեր է ձեռնարկում «Էրազմուս+» և գրանտային ծրագրերի մասնակցելու ուղղությամբ, որոնք դեռևս պլանավորման փուլում են:

Անդրադառնալով ներքին շահակիցների՝ օտար լեզուների տիրապետմանը՝ հարկ է նշել, որ ըստ ինքնավերլուծության տվյալների՝ դասավանդողների, վարչական աշխատողների և ուսանողների ռուսերենի իմացությունը 100% է, անգլերենի իմացությունը համապատասխանաբար կազմում է՝ 24 . 14%, 33%, 3,2-50% (ըստ տարբեր կրթական ծրագրերի), ընդ որում ամենաբարձր իմացություն ունեն «Երգչախմբավարություն», իսկ ամենացածրը՝ «Երաժշտության տեսություն» կրթական ծրագրի ուսանողները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջում առանձնահատուկ ուշադրություն են դարձնում իտալերեն լեզվի ուսուցմանը, որին սակայն դեռևս տիրապետում են ուսանողների 0,9%-ը: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջը լրացուցիչ դասընթացներ դեռևս չի պլանավորում ներքին շահակիցների օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գնահատում է Քոլեջի ջանքերը մասնագիտական համայնքի հետ կապերի զարգացման ուղղությամբ, ինչը դրսևորվում է ինչպես տեղական կրթական և մշակութային հաստատությունների հետ համագործակցության, այնպես էլ ուսանողների ներգրավվածության միջոցով տարբեր մշակութային նախագծերում: Գործատուների հետ հաստատված գործընկերային կապերն ապահովում են ուսանողների պրակտիկ հնարավորությունները և մասնագիտական փորձի ձեռքբերումը, իսկ դրանց կառուցվածքային զարգացումը և կրթական ծրագրերի համեմատական վերլուծության իրականացումը կարող են նպաստել ուսումնական ծրագրերի արդիականացմանը:

Քոլեջի միջազգային համագործակցությունը հիմնականում արտահայտվում է ուսանողների մասնակցությամբ միջազգային մրցույթներին և փառատոներին, ինչը թույլ է տալիս նրանց ձեռք բերել միջազգային ճանաչում և ամրապնդել մասնագիտական դիրքերը: Սակայն ռազմավարական մակարդակում միջազգայնացման հստակեցված քաղաքականության բացակայությունը սահմանափակում է համակարգված զարգացման հնարավորությունները: Միջազգային համագործակցության ուղղությամբ հստակ նպատակների և ծրագրերի ձևավորումը, ինչպես նաև արտասահմանյան գործընկերների հետ կապերի ամրապնդումը կարող են մեծապես նպաստել ուսանողների և դասախոսների շարժունության ընդլայնմանը, նոր մեթոդաբանությունների փոխանակմանը և կրթական ծրագրերի որակի բարձրացմանը:

Օտար լեզուների իմացությունը Քոլեջում մնում է միջազգայնացման գործընթացների զարգացման առանցքային գործոններից մեկը: Անգլերենի սահմանափակ իմացությունը կարող է խոչընդոտել ուսանողների միջազգային կրթական հնարավորություններից օգտվելու

գործընթացը։ Լեզվական հմտությունների բարելավմանն ուղղված ծրագրերի ներդրումը և օտար լեզուների ուսուցման ռազմավարական զարգացումը կարող են նպաստել Քոլեջի ներգրավվածությանը միջազգային կրթական ցանցերում և ուսանողների մրցունակության բարձրացմանը։

Եզրահանգում։ Հաշվի առնելով, որ քոլեջը համագործակցում է տեղական և միջազգային ոլորտային կրթական և մշակութային հաստատությունների հետ, համագործակցությունները նպաստում են դիմորդների ներգրավմանը, ուսանողների պրակտիկաների իրականացմանը, ուսանողները և դասախոսները մասնակցում են հանրապետական և միջազգային մրցույթների, փառատոնների, համերգների՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է չափանիշ 9-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար**։

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջում որակի ապահովման բաժինը ձևավորվել է 2016թ.-ին, սակայն որոշ ժամանակ անց այն դադարել է գործել, միաժամանակ և դանդաղել են նաև Քոլեջում որակի ապահովման համակարգի ձևավորմանն ուղղված աշխատանքները։

2021թ.-ին ներդրվել է կրթության որակի պատասխանատուի հաստիքը։ Կրթության որակի պատասխանատուն ունի պաշտոնի նկարագիր, որտեղ որպես մասնագիտական պահանջ սահմանված է բարձրագույն կրթության առկայությունը, մանկավարժական, գիտական կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժը։ Սահմանված են նաև ընդհանրական այլ պահանջներ, օրինակ ապահովել քոլեջի հիմնական գործառույթների իրականացումը, ներկայացնել քոլեջի զարգացմանն ուղղված առաջարկություններ, պատրաստել տարբեր բնույթի հաշվետվություններ և այլն։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջը չունի որակի ապահովման աշխատանքների տարեկան պլանավորում։ ՈԱ պատասխանատուի աշխատանքները հիմնականում կենտրոնանում են դասալսումների, Քոլեջի կանոնակարգերի և ընթացակարգերի կազմման, խմբագրման, ինչպես նաև հարցաթերթերի մշակման և հարցումների անցկացման վրա, մինչդեռ նրա պաշտոնի նկարագրի հիմնական

գործառույթները վերաբերում են որակի ներքին ապահովման գործընթացների մշակմանը, իրականացմանը և մշտապես բարելավմանը, որակի ներքին չափանիշների և չափորոշիչների սահմանմանը:

Որակի մշակույթի ձևավորման և գործընթացների կանոնակարգման նպատակով Քոլեջը փորձել է ձևավորել համապատասխան փաստաթղթային բազան: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս նպատակով Քոլեջի կրթության որակի պատասխանատուի կողմից 2021թ. մշակվել է «Որակի ներքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթուղթը, որը սահմանում է որակի ապահովման նպատակները, հիմնական ոլորտները, գործընթացներն ու ընթացակարգերը: Քաղաքականության ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանում առկա որոշ ուղղություններ առավել ընդգրկուն են և շեշտադրում են ոչ թե իրականացվող գործընթացների գնահատումն ու կարիքների վերհանումը, այլ քոլեջի կառավարմանը, հանրային կապերի ձևավորմանն ուղղված գործընթացները: Այսպես, օրինակ, քաղաքականությունը միտված է կարգավորելու Քոլեջում անձնակազմի ներգրավման, զարգացման, վերապատրաստումների, ուսուցման և ուսումնառության, գնահատման և ուսանողի առաջընթացի, տեղեկատվության և տվյալների կառավարման, հանրային կապերի և հաղորդակցության, շահակիցների հետ հարաբերությունների գործընթացները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին շահակիցների մի մասը հաճախ նույնական է ընկալում ուսումնական մասի և որակի ապահովման ենթակառուցվածքի աշխատանքները:

Քոլեջի կրթության որակի պատասխանատուի կողմից իրականացվում են հարցումներ շահակիցների շրջանում՝ վերհանելու ուսանողների, դասախոսների, շրջանավարտների կարիքները: Հարցումներն իրականացվում են թղթային տարբերակով՝ ներքին շահակիցների, իսկ արտաքին շահակիցներից միայն շրջանավարտների շրջանում: Միևնույն ժամանակ՝ անհրաժեշտ է նշել, որ առկա չէ հարցումների անցկացման հստակ պլան-ժամանակացույց, դրանք իրականացվել են ոչ պարբերական կամ ընհատումներով: Հարցումների արդյունքները քննարկվել են Քոլեջի ղեկավարի հետ: Որակի ապահովման պատասխանատուն զեկուցագրերի տեսքով հաշվետվություն է ներկայացրել տնօրենին: Միևնույն ժամանակ չի իրականացվել հարցումների որակական և տարբեր տարիների համեմատական վերլուծություններ, դրանք առավել շատ բավարարվածության վերաբերյալ տվյալներ են, կարճ ամփոփումներ և փոփոխությունների իրականացման հիմք չեն դարձել:

Հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում ներառված հարցերը բավական ընդհանրական են, օրինակ՝ «Դասընթացի որակից ուսանողների բավարարվածության գնահատման» հարցաթերթում ներառված են «Գնահատել դասի անցկացման որակը», «Դասընթացին վերաբերող անհատական մոտեցում», կամ «Դասի ընթացքում շփման կուլտուրա» հարցերը:

Փորձագիտական այցից պարզվեց, որ շահակիցների արձագանքների հիման վրա հարցաթերթերի հարցերը վերանայվել են:

Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ Քոլեջի կողմից կազմակերպվում են դասախոսների հետ ֆոկուս-խմբային հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում են կրթական ծրագրերի փոփոխությունների հետ կապված հարցեր: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քննարկումների ընթացքում դիտարկվել են պետական կրթական չափորոշիչները, դասալսումների արդյունքները և դասավանդման ընթացքում կիրառված մեթոդները: Այսուհանդերձ, քննարկումների ընթացքում բացահայտված և լուծում ստացած հարցերի օրինակներ առկա չեն: Նշենք, որ որակի ապահովման պատասխանատուն կազմակերպում է ՄԿԾ-երի մշտադիտարկում, ստուգում է ՄԿԾ-ների փաստաթղթային փաթեթները, սակայն դա իրականացվում է ուսումնական գործընթացի կազմակերպման, այլ ոչ թե որակի ապահովման քաղաքականության տեսանկյունից:

Չնայած որակի ապահովման համակարգի ձևավորմանն ուղղված աշխատանքները քոլեջում վաղուց են մեկնարկել, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈԱ գործընթացները գտնվում են ՊԻԳԲ շրջափուլի պլանավորման և իրականացման փուլում և միայն որոշ գործընթացներում, օրինակ հարցաշարերի վերանայման գործում ՊԻԳԲ շրջափուլի բարելավման փուլում են: Նոր ձևավորված փաստաթղթերի և գործընթացների արդյունավետությունը դեռ չի գնահատվել, քանի որ դրանք ներդրվել են վերջին երկու տարվա ընթացքում, օրինակ 2024թ. սեպտեմբերին հաստատվել է «Որակի ներքին ապահովման և բարելավման ձեռնարկը»: Փորձագիտական դիտարկումներից պարզ դարձավ, որ 2021թ. մշակված «Որակի ներքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթուղթը լիարժեք չի գործարկվում, քանի որ նշված չեն որակի ապահովման քաղաքականությամբ առաջադրված խնդիրները, որոնք կարող են ապահովել որակի ներքին ապահովման համակարգի կայացումը:

Անդրադառնալով Քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ որակի արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար, կարելի է նշել, որ փաստաթղթում հիմնականում չեն ներկայացվել անհրաժեշտ հիմքերը, վերլուծությունների արդյունքները: Նշենք, որ սա Քոլեջի ինքնավերլուծություն իրականացնելու առաջին փորձն է: Ինքնավերլուծության ձևաչափին համապատասխան՝ քոլեջը հավաքագրել է տեղեկատվություն, փաստաթղթեր: Ինքնավերլուծությունում հաճախ չի երևում SWOT վերլուծության հետ կապը, կան հակասություններ: Կազմված ինքնավերլուծությունը չի տարածվել շահակիցների ամբողջական շրջանակում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին շահակիցների կարիքները ամբողջությամբ արտացոլված չեն ինքնավերլուծությունում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջը ձեռնարկել է որակի ապահովման ներքին համակարգի ձևավորմանն ուղղված քայլեր: 2016 թվականից սկսված գործընթացը, որակի ապահովման պատասխանատուի հաստիքի ներդրումը 2021 թվականին, ինչպես նաև որակի ներքին ապահովման քաղաքականության մշակումը վկայում են, որ

Քոլեջը գիտակցում է կրթության որակի ապահովման համակարգի ներդրման անհրաժեշտությունը: Սակայն, այս գործընթացների շարունակականությունն ու համակարգվածությունը մնում են մարտահրավեր: Այդ համակարգի գործնական կիրառման հստակ մեխանիզմների բացակայությունը կարող է վտանգել դրա արդյունավետությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Քոլեջի ջանքերը՝ մշակելու և ներդնելու որակի ապահովման փաստաթղթային բազա: «Որակի ներքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթուղթը սահմանում է որակի ապահովման հիմնական նպատակները և գործընթացները: Սակայն փաստաթղթում առկա են անհամապատասխանություններ, քանի որ ընդգրկված որոշ դրույթներ շեշտադրում են ոչ թե որակի կառավարման գործառույթները, այլ քոլեջի ընդհանուր կառավարման, հանրային կապերի և տեղեկատվական քաղաքականության ուղղությունները: Այս մոտեցումը կարող է հանգեցնել որակի ապահովման հիմնական գործառույթների մասնատման և կարիքների վերհանման ու բարելավման գործընթացների ոչ արդյունավետ իրականացման:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը կիրառում է հարցումներ՝ ուսանողների, դասախոսների և շրջանավարտների կարիքները վերհանելու նպատակով: Սակայն, հարցումների պարբերականության բացակայությունը, դրանց արդյունքների որակական վերլուծության սակավությունը և համեմատական վերլուծությունների բացակայությունը սահմանափակում են դրանց ազդեցությունը: Առկա տվյալները հիմնականում ներկայացված են որպես բավարարվածության ամփոփումներ՝ առանց խորքային վերլուծության և որոշումների կայացման մեջ ներառվելու: Այս համատեքստում փորձագիտական խումբը շեշտադրում է որակի ապահովման համակարգի կողմից հաստատության գործունեության բոլոր ուղղություններն ընդգրկող տվյալների պարբերաբար հավաքագրման անհրաժեշտությունը, ինչը թույլ կտա կառավարչական որոշումները կայացնել հավաստի տվյալների հենքի վրա:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Քոլեջի կողմից կազմակերպվող դասախոսների ֆոկուս-խմբային քննարկումները, որոնք ուղղված են կրթական ծրագրերի վերանայմանը: Սակայն այս քննարկումների ազդեցությունը սահմանափակ է, քանի որ բացակայում են փաստացի լուծումներ ստացած խնդիրների օրինակները: Սա կարող է նվազեցնել դրանց գործնական արդյունավետությունը, քանի որ առանց հետադարձ կապի և մշակված լուծումների գնահատման՝ քննարկումների ազդեցությունը մնում է սահմանափակ:

Փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջի ինքնավերլուծությունը, որպես որակի ապահովման արտաքին գործընթացներին պատրաստվելու կարևոր քայլ, դեռևս չունի բավարար հիմնավորվածություն: Ինքնավերլուծության մեջ հաճախ բացակայում են SWOT վերլուծության տարրերը, շահակիցների կարիքների ամբողջական պատկերը և վերլուծությունների հստակ հիմնավորումները: Սա կարող է խոչընդոտել Քոլեջին՝ իր որակի ապահովման համակարգի շարունակական բարելավման գործընթացում, քանի որ առանց հիմնավոր տվյալների՝ բարելավման ծրագրերի արդյունավետ իրականացումը դժվարանում է:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջը ձեռնարկել է որակի ապահովման ներքին համակարգի բարելավման նոր նախաձեռնություններ, այդ թվում՝

«Որակի ներքին ապահովման և բարելավման ձեռնարկի» հաստատումը 2024 թվականին։ Սակայն այս գործընթացների իրական ազդեցությունը դեռևս չի գնահատվել, քանի որ դրանք վերջերս են ներդրվել։ Անհրաժեշտ է հստակեցնել որակի ներքին ապահովման համակարգի առաջնահերթությունները, ապահովել հստակ պլանավորում և գնահատման չափանիշներ, ինչը թույլ կտա որակի ապահովման համակարգը դարձնել բարելավումների իրականացման գործիք։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը սահմանափակ է որակի ապահովման գործընթացներում և բավարար չափով չի նպաստում քոլեջում ընթացող գործընթացների բարելավմանը, հարցումների և այլ գործիքակազմով հավաքագրված տվյալները չեն ենթարկվում խորքային վերլուծության և չեն դառնում կառավարչական արդյունավետ որոշումների կայացման հիմք, որակի ապահովման աշխատանքներն իրականացվում են առանց հստակ պլանավորման և համակարգված մոտեցման, իսկ կրթության որակի պատասխանատուի գործառույթները հաճախ դուրս են որակի ապահովման քաղաքականության շրջանակից՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը չի համապատասխանում չափանիշ 10-ի պահանջներին։

Եզրակացություն: Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**։

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	**Բավարարում է**
2. Կառավարում ու վարչարարություն	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	**Բավարարում է**
4. Ուսանողներ	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	**Բավարարում է**
6. Հետազոտություն և զարգացում	**Բավարարում է**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվություն	**Չի բավարարում**
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգ	**Չի բավարարում**



Արմեն Հարությունյան
Փորձագիտական խմբի ղեկավար

21-ը փետրվարի, 2025 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմեն Հարությունյան՝ 2000 թվականին ավարտել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Թատերագիտության բաժինը, 2003 թվականին ստացել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2002 թվականից դասավանդում է Արվեստի սոցիոլոգիա և Թատրոնի պատմություն Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում, ունի դոցենտի կոչում: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների, այդ թվում՝ «Կամավորի ներառական դպրոց» (ՀՀ ԿԳՄՍ ԵՀՍԿ, Երևան, 2024), «Մասնագիտական կրթական ծրագիր. ակնկալվող ելքային արդյունքներ և ուսանողի գնահատում» (ՀՀ ՈԱԱԿ, Երևան, 2017), «Հանուն արդյունավետ ուսուցման և ուսումնառության» (ԵԹԿՊԻ, 2015), «Թատրոնի կառավարում» (Բոստոն, Նյու Յորք, 2008), «Սոցիոլոգիական որակական հետազոտություններ» (ԵՊՀ, 2001), «Art management, People management» (Թբիլիսի, 1999) և այլ վերապատրաստումներ: 2004-2011 թվականներին զբաղեցրել է Թատրոնի և կինոյի ֆակուլտետի դեկանի տեղակալի պաշտոնը, 2011-2013 թվականներին եղել է ուսումնական մասի վարիչ, 2013-2014 թվականներին աշխատել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Մշակույթի և տուրիզմի վարչության մշակույթի բաժնում որպես գլխավոր մասնագետ: 2014-2023 թվականներին եղել է ԵԹԿՊԻ-ի Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի դեկանը, իսկ 2023 թվականից զբաղեցնում է Զարգացման գծով պրոռեկտորի պաշտոնը: Հեղինակել և համահեղինակել է մի շարք գիտական հոդվածներ:

Գայանե Ավետիսյան՝ 1992 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի Աշխարհագրության ֆակուլտետը, 2006 թվականին ստացել է աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2014 թվականին շնորհվել է դոցենտի կոչում: Հեղինակ է 23 գիտական հոդվածների: 1991-2020 թվականներին աշխատել է Գյումրու թիվ 26, թիվ 9, թիվ 1 ավագ դպրոցներում որպես աշխարհագրության ուսուցիչ (առաջին կարգի որակավորմամբ): 2011-2012 թվականներին ԵԿՏԱ-ի Գյումրու մասնաճյուղում աշխատել է որպես Զբոսաշրջության և սպասարկման նոր տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս: 1994 թվականից մինչ օրս աշխատում է Շիրակի պետական համալսարանում՝ որպես Աշխարհագրության և սերվիսի ամբիոնի դոցենտ: 2019-2022 թվականներին զբաղեցրել է Շիրակի պետական համալսարանի ռեկտորի օգնականի պաշտոնը, այնուհետև 2022-2023 թվականներին եղել է Աշխարհագրության և սերվիսի ամբիոնի վարիչ: 2023 թվականից մինչ օրս ՇՊՀ Որակի ապահովման բաժնի պետն է:

Մարիամ Հովհաննիսյան՝ 2010 թվականին ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ակադեմիական վոկալ բաժինը: 2005 թվականից երգում է Երևանի Սուրբ Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում, իսկ 2007 թվականից՝ Արարատյան հայրապետական թեմի «Ծաղկազարդ» խմբում: 2017 թվականից աշխատում է Երևանի

մշակույթի պետական քոլեջում, որը 2022 թվականին վերանվանվել է Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ՝ որպես վոկալի դասախոս։ 2022 թվականից մինչ օրս աշխատում է նույն քոլեջում՝ որպես «Երաժշտության» ամբիոնի վարիչ։ Մասնակցել է բազմաթիվ համերգների, փառատոնների և մրցույթների՝ Հայաստանում և արտերկրում։

Վովա Արզումանյան՝ Ավարտել է Ստեփանակերտի Գրիգոր Նարեկացի համալսարանի Արևմտահայերենի և հայագիտության գիտահետազոտական Լուտովիկա և Յակոբ Այնթապլեան կենտրոնը, ինչպես նաև Հայաստանի հանրային հեռուստաընկերության Մեդիա ակադեմիայի սցենարական վարպետության բաժինը։ Ներկայումս սովորում է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի 4-րդ կուրսում և հանդիսանում է Ուսանողական գիտական, ստեղծագործական ընկերության նախագահը։ 2023 թվականից աշխատում է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում՝ որպես հանրային կապերի պատասխանատու։ Բացի այդ, հանդիսանում է «Ավանսեն» ֆրանկոֆոն երիտասարդական ասոցացիայի և Երկլեզու դրամատիկական արվեստանոցի հանրային կապերի և մարքեթինգի պատասխանատուն։ Մասնակցել է տեղական և միջազգային գիտաժողովների, որոնց շրջանակում ներկայացրած գիտական հոդվածները միջազգային հարթակներում արժանացել են մրցանակների։ Մասնակցել է ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» նախագծին։

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	28.10 .2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	11:10	12:10	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ	12:20	13:10	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
5.	Հանդիպում քոլեջի կառավարման խորհրդի անդամների հետ	14:30	15:20	50 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ (10-12 հոգի)	15:30	16:20	50 րոպե
7.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ (10-12 հոգի)	16:30	17:10	40 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:20	19:00	100 րոպե

	29. 10.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ուսումնական մասի ղեկավարների, բաժնի վարիչների ներառյալ՝ հանրակրթական ծրագրերի բաժնի վարիչ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում ՈՒսանողական խորհրդի անդամների հետ	11:10	11:40	30 րոպե
3.	Ռեսուրսների դիտարկում	11:50	13: 00	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Դասալսումներ	14:10	15:20	70 րոպե
6.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	15:30	16:30	60 րոպե
7.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (կարիերայի ուղղորդման պատ., պրակտիկայի ղեկավար, գրադարանավար, գլխավոր հաշվապահ, գնումների մասնագետ, իրավախորհրդատու, կադրերի բաժնի տեսուչ, արխիվավար, բուժքույր)	16:40	17: 40	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:50	19:00	70 րոպե

	30. 10.2024թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում <<Երգեցողություն>> ՄԿԾ պատասխանա- տուների և դասախոսների հետ	Հանդիպում <<Երաժշտության տեսություն>> ՄԿԾ պատասխանատուների և դասախոսների հետ	Հանդիպում <<Գործիքային կատարողական արվեստ>> /Ժող գործիքներ /ՄԿԾ պատասխանատուների և դասախոսների հետ	10:00	11:10	70 րոպե
2.	Հանդիպում <<Երգեցողու- թյուն>> և <<Երաժշտության տեսություն>> ՄԿԾ ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում <<Գործիքային կատարողական արվեստ>> ՄԿԾ ուսանողների հետ (10-12 հոգի)		11:20	12:20	60 րոպե
3.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)			12:30	13:20	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկում			13:30	14:20	60 րոպե
5.	Հանդիպում ՈԱ պատասխանատուի հետ			14:30	15:20	50 րոպե
6.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ			15:30	15:50	20 րոպե
7.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ			16:00	16:20	20 րոպե
8.	Փորձագիտական խմբի փակ քննարկում			16:30	18:00	90 րոպե
9.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ			18:10	18:30	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանումը	Չափանիշ
1.	ՌԾ 2024-2029 թթ. 2021-22, 2023-2024 թթ. ուսումնական տարվա տարեկան հաշվետվություն:	1
2.	Աշխատանքային պլաններ, բոլոր ստորաբաժանումների հաշվետվություններ:	1
3.	2019-24 ՌԾ-ի մշտադիտարկման և գնահատման փաստաթղթեր:	1
4.	Ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը ռազմավարական խնդիրների լուծմանն ուղղված գործողություններն իրականացնելու ընթացակարգերը:	1
5.	Մինչև 18.04.2024 թ-ը գործող ՌԾ-ի մշակման, իրականացման, մշտադիտարկման, գնահատման և վերնայման քաղաքականությունը:	1
6.	2019 թ-ին իրականացված մշտադիտարկման արդյունքների հաշվետվությունը:	1
7.	Ֆոկուս խմբային քննարկումների արդյունքների հաշվետվություն:	1
8.	Քոլեջի էթիկայի կանոններ:	2
9.	Քոլեջի ֆինանսների վերաբերյալ կարիքների հայտերի օրինակներ:	2
10.	Պլանավորված աշխատանքների իրականացման արդյունավետության վերաբերյալ հարցումների արդյունքներն ու հաշվետվությունները:	2
11.	Բենչմարքինգի իրականացման հիմքեր:	2
12.	Ուսումնամեթոդական խորհրդի նիստերի արձանագրությունները:	2

13.	Կրթության որակի ապահովման վերաբերյալ հետազոտությունների, մշտադիտարկման արդյունքներ:	2
14.	Քոլեջի կողմից մշակված և հաստատված ծրագրեր:	3
15.	ՄԿԾ-ների Բեչմարքինգի արդյունքները:	3
16.	Ակադեմիական ազնվության քաղաքականություն, ընթացակարգեր:	3
17.	ՄԿԾ-ների ներքին և արտաքին մշտադիտարկումների 3 արդյունքներ:	3
18.	ՄԿԾ-ների մշտադիտարկման ձևաչափ:	3
19.	Ուսանողների /հավաքագրման (մասնագիտական կողմնորոշման) քաղաքականություն:	4
20.	Ընդունելության արդարությունը և թափանցիկությունն ապահովող ընթացակարգերը:	4
21.	Ընդունելության արդյունավետությունն արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ վերջին 5 տարիների համար:	4
22.	Ուսանողների կողմից վերհանված կարիքները փաստող հիմքերը վերջին 3 տարիների /վերլուծությունները, հարցումներ, քննարկումներ:	4
23.	Ուսանողների կողմից դասախոսական անձնակազմի, ենթակառուցվածքների և տրամադրվող ուսումնամեթոդական նյութերի գնահատման վերաբերյալ հարցարաններ, հիմքեր:	4
24.	Հիմքեր ԿԾ-ից ուսանողների բավարարվության արդյունքների վերլուծություններից: Հանձնարարականներ կրթական միջավայրի բարելավմանն ուղղված:	4
25.	Խորհրդատվությունների իրականացման ժամանակացույց:	4
26.	Խորհրդատվությունների բավարարավածության հարցարաններ:	4
27.	Կարիերայի կենտրոնից ուսանողների բավարարվածության տվյալների ստացման հիմքեր:	4
28.	Կարիերայի կառավարման ուղեցույց:	4

29.	ՈւԽ հանդիպումների, նիստերի արձանագրություններ:	4
30.	Ծնողների հետ հանդիպումների մասին փաստաթուղթեր:	4
31.	Կարիերայի պատասխանատուի կողմից իրականցվող հանդիպումների արձանագրություններ, հիմքեր:	4
32.	«Տարվա լավագույն ուսանող» փաստեր, հիմքեր:	4
33.	Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների և շրջանավարտներին հարցումներ:	4
34.	Պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակայման կարգը:	5
35.	Պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակայման կարգը:	5
36.	Դասախոսի գնահատում ուսանողների կողմից:	5
37.	Դասախոսի ինքնագնահատման լրացված թերթիկ, վերլուծությունների օրինակներ:	5
38.	Դասալսումների արձանագրություններ:	5
39.	Դասախոսի աշխատանքի գնահատման մեխանիզմ, ընթացակարգ: Վերլուծությունների օրինակներ:	5
40.	Քանի դասախոս են պարգևատրվել և ինչ հիմունքներով: Ովքեր են դրանք:	5
41.	Միջազգային փառատոների մասնակցության ցանկեր:	6
42.	Հաստատության կրթական նպատակների իրականացման համար ֆինանսական միջոցները կառավարելու և դրանք նպատակներին համապատասխան բաշխելու մեխանիզմներ:	7

43.	Ֆինանսական միջոցներին համապատասխան հաստատության գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականություն:	7
44.	Ուսուցման գործընթացների որակի ապահովման համար դասավանդողների և ուսումնառողների կարիքների բավարարման մեխանիզմներ:	7
45.	Գործընթացի վերանայման արդյունքները վերջին 5 տարիների համար: Գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումներ:	8
46.	Շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմները:	8
47.	Հասարակությանը տրամադրվող ծառայությունների իրականացման հիմնավորումներ:	9
48.	Վարպետաց դասերի նյութեր:	9
49.	Քոլեջի և նշված հաստատությունների հետ բոլոր պայմանագրերը:	9
50.	Հիմքեր շրջանավարտների հարցումներից, վերլուծություններից, քննարկումներից: Հարցարաններ:	10
51.	ՈԱ բաժնի տարեկան հաշվետվություններ:	10
52.	Վերջին 3 տարվա ՈԱ քննարկումների արձանագրություններ:	10
53.	Որակի ապահովման գործընթացներում ուսումնառողների և այլ շահակիցների ներգրավվածությունը հաստատող հիմքեր: Իրականավցած հարցումներիվերլուծված տվյալներ:	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. առարկայական կաբինետներ,
3. համերգային դահլիճներ,
4. ձայնագրման տաղավար,
5. ստորաբաժանումներ,
6. բուժկետ,
7. արխիվ,
8. գրադարան-ընթերցասրահ,
9. մարզասրահ։

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈՒ- Մասնագիտական կրթություն եւ ուսուցում

ՄԿՈՒԶԱԿ- Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն

ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ- որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ

ՌԾ- ռազմավարական ծրագիր

ՈՒԽ- ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ-ուսումնաօժանդակ կազմ